49րդ ՏԱՐԻ   ԹԻՒ 1536   Կ. ՊՈԼԻՍ   ԵՐԿՈՒՇԱԲԹԻ   ՅՈՒՆԻՍ 26 — 9 ՅՈՒԼԻՍ 1906   14 ՃԷՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 1324 — 26 ՀԱԶԻՐԱՆ 1322

Journal Armenien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte.
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԷՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Պապը Ալի ճամբէսի, 38
Խմբագրութեան ուղղուած գրութիւններ ետ չեն տրուիր

Մանզումէի Էֆքեար

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افکار
ارمنیجه یومی وسیاسی غزه‌تەدر
صاحب امتیازی : اوهانس فرید
اداره‌خانه‌سی : باب عالی جاده‌سنده نومرو ۳۸

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆԽԻԿ	Տարեկան	Վեցամսեայ
Պոլսոյ համար	80 ղր.	50 ղր.
Գաւառներու համար	108 »	60 »
Արտասահմանի համար	25 ֆր.	18 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար տողը 5 ղրուշ.
Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար մասնաւոր պայմաններ

10 ՓԱՐԱ   ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ՄԱՆԶՈՒՄԷ», ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏՈՒՆ   10 ՓԱՐԱ

ՅԱՐԳԱՆՔԻ ՊԱԿԱՍԸ

Ամէնէ մը ի վեր պարբերաբար հոսկէ հոնկէ սանկ ցաւոտ չնչտով մը յարգանքի պակասին դէմ բողոքներ, մեղադրանքներ կը բարձրանան մեր համայնքին մէջ։

Մեծեր իրենց պզտիկներու երեսին տալով յարգանքի մէջ անոնց ունեցած թերութիւնը ? կարծես սիրտ պաղչկալնել կ'ուզեն, վարժապետներ իրենց աշակերտներու հասցէին ուղղելով յանդիմանանքի չնչտեր, վիրաւորուած արժանապատուութիւն մը դարմանել կը փորձեն կարծես, բարերարներ բարերարեալներու համար «ապերախտ» կ'ըսեն ցաւագին... ու այսպէս ամէն մարդ, մեր մէջ, մասնաւոր տրտունջք մը ունի յարգանքի թերութեան մասին։

Բայց ինչո՞ւ, չեմ գիտեր, երբ անոնք բոլորը իրենց ցաւերէն կը խօսին, երբ մէկը խաբուած մը ըլլալը կը յայտարարէ, միւսը նախատուած մը ըլլալը կ'ըսէ, ինչո՞ւ բնաւ չեն ցուցներ բուն խոկ ակը, ուրկէ կը բխի այդ չարիքը։

Արդեօք անո՞ր համար որ պատճառները ուղղակի իրենց մէջ պիտի գտնեն, թէ արդէն չենք վարժուած բարոյական վէրք մը տեսնելէ վերջ անոր պատճառը փնտռել ու զայն արմատէն բուժել յանէտ։

Ամէն պարագայի մէջ յարգանքի պակասը ցաւալի իրողութիւն մըն է, որ մասնաւորապէս մեր մէջ հետզհետէ լայն ծաւալ կ'առնայ։

Վստահ կերպով կ'ըսեմ թէ՝ եթէ ոչ միշտ, յաճախ չարիքները տարեցներէն կը ծնին. անոնք են որ իրենց վարքով ու բարքով միշտ տեղի կուտան պզտիկներուն յարգանքի մէջ թերի ըլլալ իրենց հանդէպ ու վիրաւորել զանոնք։

Մեր այսօրուան տարեցներն ու տոհմնջացողները երբ նեղութիւն յանձն առնեն դէպի ետ, իրենց տղայութեան ու պատանեկութեան օրերը երթալու, պիտի գտնեն թէ՝ իրենք ալ ունեցած են այն թերութիւնները, որոնց համար այսօր կը գանգատին։

Մենք մեր տարեցները դէպի ետ տանելով կ'ուզենք զանոնք ստիպել որ վերյուշումի մը վայրկեանին մէջ փնտռեն իրենց պակասութեան չարժառիթները, և վայրկեան մը վերջ ինքնահայեցումի մը առնեն պիտի շատ պարզ տեսնեն թէ՝ ինչ առիթներ որ իրենց ժամանակին մեծերը սահեցած էին իրենց, նոյն առիթները այսօր իրենք մեզի՝ նորերուս կ'ստեղծեն ու մենք յարգանքի մէջ կը թերանանք։

Սա տարբերութեամբ որ անոնք աւելի անձուկ շրջանակի մը, աւելի նեղ աշխարհի մը ու մարդերու պզտիկ ամբոխի մը մէջ ապրելով երբ քիչ բաներ կը նկատէին յարգանքի պակաս, այսօր ժամանակը բարքերէն շատ բան փոխելով շատ աւելի պզտիկ բաները անգամ թերութիւն կը համարուին։

Աւելի որոշ հասկցնելու համար, օրինակով խօսինք.

Դաստիարակը իր աշակերտին սիրտը ու հոգին կրթող բարի անձն է, և իրաւունք ունի յարգուելու անկէ ու երախտագիտութիւն սպասելու։ Չեմ կարծեր բնաւ թէ ո և է աշակերտ յարգանքի ցցուն պակասութեան մը մէջ գտնուած ըլլայ իր վարժապետին հանդէպ, երբ ան իր տղուն արժանապատուութիւնը չէ վիրաւորած, երբ իրեն անիրաւութիւն չէ ըրած, երբ միշտ իր պաշտօնին ու գիրքին ճշմարիտ տէրը եղած է.

Բայց ի՞նչ իրաւունքով և ի՞նչ համարձակութեամբ սպասել աշակերտէն ամէն յարգանք ու երախտագիտութիւն, երբ զայն զրկած է աշակերտի ամէն իրաւունքներէ, երբ զայն անիրաւաբար նախատած է յաճախ ու անոր արժանապատուութիւնը վիրաւորած։

Արժանապատուութեան խնդիրը մասնաւորապէս՝ ինչ որ շատեր շատ անկարեւոր կը նկատեն. տղայի մը արժանապատուութիւնը այնքան նուրբ ու զգայնիկ է որ շատ պզտիկ խօսքերով ու քաշքշով անգամ կը վիրաւորուի անդարմանելի կերպով, և երբ վարժապետը իր խելքի ու հասուն գլխուվը իրաւունքը կուտայ ինքնիրեն մանուկ մը չնչին նկատել ու անոր արժանապատուութիւնը վիրաւորել, ինչո՞ւ միևնոյն ատեն ինքզինքը արժանի չըներ վայրկեան մը վերջը, օր մը յետոյ կրելու իր ըրած անիրաւութեան պատիժը։

Ուրիշ պարագայ մը եւ. յաճախ մեծեր իրենց պզտիկներուն, վարժապետներ իրենց աշակերտներուն դէմ գանգատի ու ցաւի բառեր նետելով չարամտութիւն ունին զանոնք վարկաբեկելու, զոր այնքան ճարպիկօրէն կը ծածկեն։

Այո՛, յաճախ աշկերտը իր վարպետը պէկ անցնելու յատկութիւնը կ'ունենայ. վարպետը, սրամիտ մարդ, առաջին օրէն իսկ կը նկատէ ատիկա ու զայն իր փառքին համար գործածելու, զայն չարունակ իր տրամադրութեան տակ ունենալու ճիգեր կ'ընէ, նախանձ մը կը սկսի անմիջապէս անոր կուրծքին տակ, ապագայի հեռանկարը զինքը կը սոսկացնէ, ու միշտ ինքզինքը իր աշակերտին յառաջդիմութեան վրայ խորհող մը ցուցնելով մէկտեղ թաքուն միջոցներով արգելքներ կը դնէ յառաջդիմելուն առջեւ, սոսկ ատեն մը գոնէ յետաձգելու տառապեցնող գերազանցութեան վայրկեանը, վստահ ըլլալով որ չկրնար բնաւ արմատապէս արգելք ըլլալ յառաջացումի օրէնքին։

Բնականաբար աշկերտն ու աշակերտը, պզտիկը ու բարերարեալը իրենց առաջին օրերուն մէջ չեն կրնար նկատել խնդիրը, սակայն ժամանակը անոնց աչքերը կը բանայ ու անոնք կամաց կամաց կ'սկսին տեսնել ամէն բան։

Ա՛լ կը վերջանան ամէն յարգանք ու ակնածանք, և միթէ իրաւունք չունի՞ն անոնք ընելու այդ բաները, և միթէ իրաւունք ունի՞ն այդ տեսակ անհատներ յարգանք սպասելու անոնցմէ։

Այսպէս ահա երբ կը փորձուինք այս տեսակ կենցաղագիտական պակասութիւններու աղբիւրը գտնել, միշտ պատճառին էականները տարեցներու մօտ պիտի գտնենք և անոնցմէ է որ կը ծագին միւս պզտիկները։

Անտեղի գանգատներու տեղի չտալու համար, և պզտիկներ միշտ իրենց պատշաճ դիրքին մէջ պահելու համար, տարեցները ուրեմն իրենց յարմար դիրքը բռնել գիտնալու են, որովհետև երբ անոնք չգիտնան իրենց արժանիքին տէրը ըլլալ, պզտիկներու պակասութիւնները իբրեւ իրենց պատիժը միշտ պիտի ցցուի աչքերնուն առջեւ և ապարդիւն գանգատներու վերջն ալ չպիտի գայ բնաւ։

Յ. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ

Պօսդըն

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊԱՏԱՐԱԳԸ
ՆՈ՞Ր ԹԷ ՀԻՆ ԾԷՍ Է

Կորիւն վարդապետ և Հայր Հացունի Եպիսկոպոսութեան մասին վերջերս վէճ մը ունեցան. Կորիւն վարդապետ իր մէկ յօդուածին մէջ կը գրէր թէ «Պատարագ բառը ճիշտ չթուիր իրեն, պէտք է գործածել Հաղորդութեան Խորհուրդ և թէ միշտ բնականիլ զհաց գործածուած է հաղորդութեան համար Առաքեալներուն կողմէ։»

Պիտի հաստատենք թէ ո՛չ միայն Իսրայէլի ժողովրդին մէջ պատարագ բառը գոյութիւն ունէր, այլ և Առաքելոց գործոց մէջ ալ, և թէ Առաքելոց կողմէ իսկ գործածուած է այդ բառը։

Յիսուս Քրիստոս չեկաւ լուծելու Օրէնքն և Մարգարէքը, այլ ինչ որ թերի էր, ինչ որ պէտք ունէր կատարելագործուելու, զանոնք ամբողջացնելու, նուիրագործելու։

Ողջակէզը, Պատարագը Իսրայէլի ժողովրդեան մէջ նուիրական պաշտօնակատարութիւն մըն էր, որ ի ձեռն Քահանայապետին կը կատարուէր ի թողութիւն իւր և ժողովրդեան մեղաց, տուներն Խաչի պատարագին, սեղանին Պատարագին։

Ահարոնեան քահանայութիւնը կը պահանջէր ողջակէզը ի դուռն խորանին ածել ի պատարագ վասն փրկութեան մեղաց. իսկ այն որ «ի դուռն խորանին ոչ ածիցէ առ ի մատուցանելոյ պատարագ Տեառն, յարիւն համարեսցի մարդոյն այնմիկ. Ղեւտ. ժէ. 4։»

Զնոյն ուզեր հին ուխտէն վկայութիւններով սաստարացնել այս յօդուածը. այլ կ'անդրադառնանք Նոր ուխտին ուրկէ կը փափաքի անշուշտ լսել վարդապետը։

Պօղոս իր առաջին թղթոյն Բ. գլխին 5 համարին մէջ ցոյց տալէ յետոյ թէ քրիստոնեայ մը ի՛նչպիսի կեանքով պէտք է ապրի, կը յարէ. «Եւ դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր. յանարատ քահանայութեան մատուցանել զհոգևորն պատարագս հաճոյ Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։»

Հին օրինաց մէջ ողջակէզը երբ բանակին մէջ կամ արտաքոյ դրան խորանին կը մատուցուէր, անոնց մարմինը կ'այրուէր արտաքոյ բանակին (Ղեւ. ժէ. 1—20). Պօղոս այդ օրէնքը յիշելով կ'ըսէ. «Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել որք պաշտեն զպաշտօն խորանին. զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբութիւնն վասն մեղաց ի ձեռն Քահանայապետին, նոցին մարմինք այրէին արտաքոյ բանակին. Վասն որոյ և Յիսուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, արտաքոյ դրան չարչարեցաւ.... Արդ ի ձեռն նորա մատուցուցուք պատարագ օրհնութեան...»

Ս. Հաղորդութեան խորհուրդը ո՛չ միայն կ'ըսուի պատարագ, այլ և ընթրիք, բաժակ օրհնութեան գոհութիւն, (եֆխարիսթիա), բեկանել հացին։

Պօղոս Եբրայեցւոց Է. գլխոյն 11—28 համարներուն մէջ խօսելով հին քահանայութեան վրայ, կ'ըսէ. «Հին օրինաց քահանայապետք նախ իրենց մեղաց համար և ապա ժողովրդեան մեղաց համար պատարագ կը մատուցանէին (Ել. ԻԹ., Ղեւտ. ԺԶ.), իսկ Յիսուս Քրիստոս «զայն (զպատարագն) միանգամայն կատարեաց. զի զանձն իւր մատոյց պատարագ։»

Նոյն ինքն Պօղոս է դարձեալ որ կը գրէ առ Եբրայեցիս թէ հին օրինաց մէջ ի՛նչպէս կը պատրաստուէր խորան. «զի խորանն առաջին հանդերձեաւ այսպէս, յորում աշտանակն և սեղանն եւ հացն նուիրաց,» թէ առաջին խորանը քահանայք պաշտօն կը կատարէին յամենայն ժամ. իսկ երկրորդ խորանը տարին մի անգամ քահանայապետը (Թուոց. ԻԸ. 3. Ելից Լ. 10). իսկ Յիսուս երբ քահանայապետ նոր օրինաց ո՛չ թէ նոխազաց այլ իր արիւնովն փրկութիւն գտաւ. ուստի «որչա՞փ եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի մեռելոտի գործոց անտի պաշտել Աստուած կենդանի։» (Եբրայ. Թ. 1—15). «Ապա հարկ էր օրինակացն այնպիսեօքն սրբել և բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պատարագօք քան զնոյնս. Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ զանձն պատարագ, որպէս քահանայապետն...: բայց արդ առաւել միանգամ ի կատարած յաւիտենից յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է. Նոյնպէս և Քրիստոս միանգամ մատուցեալ պատարագ առ ի բառնալոյ զմեղս բազմաց։» (Անդ. 23—28). «Որով կամօք և մեք սրբեցաք ի ձեռն պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի միանգամ... սա զմին վասն մեղաց մատոյց պատարագ... քանզի միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս։» (Եբրայեց. Ժ. 10—14). Յետոյ կ'ուսուցանէ մեզ թէ ի՛նչպէս պէտք է մօտենանք. «Ունիմք այսուհետեւ, եղբա՛րք, համարձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի... մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց, և մկրտեալ զմարմինս ի ջուրս սրբութեան։» (Անդ. 19—22).

Յիսուս Քրիստոս կը պատուիրէ առաքեալներուն ընթրիքին միշտ տալը (?) կատարել, որպէսզի պատարագը զոր խաչին վրայ մատոյց, մատչի հանապազ ի թողութիւն մեղաց «որ ի վերայ բազմաց հեղանի ի թողութիւն մեղաց։» (Մատթ. ԻԶ. 28) առ ի պատմել զմահ Տեառն «քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմիցէք։» Ա. Կորնթ. 11—26).

Սոյն վկայութիւններէն կը հասկընանք որոշապէս թէ խաչին պատարագն նոյն է ըստ պատարագին որ ի վերայ սեղանոյն. ըստ Պետրոսի քահանայն անարատ տաճար է հոգևոր որ կը մատուցանէ հոգևոր պատարագ, (շատ պատարագներ), ըստ Պօղոսի կը հրաւիրուիմք մատուցանել պատարագ օրհնութեան, որպէսզի նուաւ սրբուի ժողովուրդն ի մեղաց և ի մեռելոտի գործոց։ Ուրեմն Պօղոսի զոհաբերութիւնն է որ կը կատարուէր սեղանին վրայ ի ձեռն քահանային նոյն իսկ Առաքելական դարուն մէջ, Առաքելոց ձեռօքն իսկ։ Այսպէս ըմբռնած են նաեւ եկեղեցւոյ Հարք «զահաւոր պատարագն դնելով ի վերայ սեղանոյն... այնու փրկութիւն հայցեմք մեզ։ (Գրիգոր Նարեկացի, ի մեկն. երգ. ի բանն Ե.) Սուրբն Յուստինոս, որ ժամանակակից էր առաքելոց, աշակերտաց կը պատմէ թէ Զմիւռնիոյ հաւատացեալները կը հաւաքուէին Ս. Պօլիկարպոսի (Յովհաննէս Աւետարանչի աշակերտին) գերեզմանին շուրջն, որուն վրայ կը կատարուէր պատարագը։— «Քրիստոս Տէրն մեր որպէս նախ քան զմահն մեզ պատարագեաց, և պատարագեցաւ ի վերնատունն, զնոյն պատարագն մատոյց, զոր մատուցանելոց էր ի հեռաւոր (?) աւուրն մեռանելոյն ի վերայ խաչին, այսպէս և այժմ որ կենդանի է և ի ձեռն քահանայից պատարագէ և պատարագի ի վերայ սրբոյ սեղանոյն՝ զնոյն պատարագն մատուցանէ, զոր միանգամ մատոյց ի վերայ սրբոյ խաչին մեռանելովն ի նմա։ Ուստի ըստ ամենայնի նոյն է պատարագս մեր ըստ պատարագին, որ մատուցաւ ի վերայ խաչին։» (Մեկնութիւն Մատթէի)

Ուստի Կորիւն վարդապետ կը սխալի երբ կըսէ թէ պատարագը յետամուտ է ինչպէս կ'ըսէն Բողոքականք և կը վերադրէն Կիպրիանոսի։

ՀՄԱՅԵԱԿ ՔՀՆ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԷՋ

Երբ հին պղինձին և կամ ձուարին մէջ որդ կ'ինայ, պեխեր է։

Երբ մէկուն վրայէն անցնիս՝ անոր հասակը կը կարճնայ։

Օճառը ընկերիդ կամ սիրելիիդ ձեռքին մէջ մի՛ դներ լուացուած ատենը, որպէս զի չզմաք, ձեռքին վրայ դնելու ես։

Ոտքին տակը հաւասար եղող մարդուն (տափոտակն) հետ ճամբորդութիւն ընողը անյաջողութեան կամ վտանգի կ'ենթարկուի։

Եթէ թաղուելիք մեռելին վրայ «Փառք ի բարձունս» փառաբանութիւնը չըսուի, գազանները փչեր ատեն անոր դիակը կը փարատեն։

Կօշիկը գետինը հակառակ կողմէն դնել, այսինքն երեսը դէպ ի վար, աղէկ չէ, այդ տունէն մարդ կը մեռնի։

Երբ երկու հոգի միևնոյն աղբիւրէն ջուր խմեն՝ մէկուն կը մեռնին։

Կածը արևը հանելու չէ, վասն զի կովուն կաթի երակը կը ցամքի։

Հողէ ամանը չինել՝ ամէն մարդու չի գար, կը վնասուի։

Լուրճ (լայն տերևներով կծու բանջար) քաղել ամէն մարդու չի գար։

Ցերեկը ճրագ վառողը հաւկուրոյք կ'ըլլայ։

Ծաղկազարդի կիրակին երբ եկեղեցիէն օրհնուած ուռենիի ճիւղ մը բերելով ձեր մածունի ամանին վրայ դնէք՝ կովուն կաթը կը շատնայ։

Երբ մէկուն ոտքին տակը կեռայ՝ ճամբորդութիւն պիտի ընէ։

Գիշեր ատեն եղունգ պտտել աղէկ չէ։

Եկեղեցւոյ աղօթողը եթէ եարին նայի՝ քար կը կտրի։

Այն մարդուն ծծմրակը որ փոս է՝ կծծի է։

Տնմիայ աղջիկներ ծոմ պահելու են որ բաղդերնին բացուի։

Օձին «անտէր» ըսելու է որ մարդ չի խայթէ։

Վէճի օրը եօթը տեսակ ծաղիկ կը թափեն եօթը աղբիւրներու ջուրին մէջ և այն ջուրով կը լոգնան, որ երբեք դող չունենան։

Վէճի օր եթէ անձրև գայ, ամէն քանի մը կաթիլներ կ'առնեն ու կաթը կը մակրդեն, որով կովուն կաթը չի ցամքիր և կովը չմեռնիր։

Գարնանայինները ժամանակ երկրագործները առանց կրակը կոճա (բեղով շալուած խոչոր հաց) նետելու, լուծքի չեն ելլեր, վասն զի հունձքերը կը վնասուին։

Եթէ նորածին մանկան պորտը կտոր մը թուղթի վրայ կտրուի՝ մեծ գիտնական մը կամ վարդապետ մը կ'ըլլայ, իսկ եթէ դրամի վրայ դնելով կտրուի՝ շատ մեծ հարուստ մը կ'ըլլայ։

Եթէ մէկուն քթին մէջ վէրք մը կայ, թող կատուին կակուղ պոչին ծայրը ամէն առտու քթին մէջ խօթէ և քանի մը օրէն կը բուժուի։

Հաւաքեց
ԿԱՐԱՊԵՏ ԱՇԽԱՆԵԱՆՑ
Խարբերդ-Մեծկերտ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ
ՀՈՎԱՆՈՑԻ ՄԸ ՍԻՐՈՅՆ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԺԳ

Ֆրանսացին առաջ անցնելով յարեց.

—Բայց ներեցէք օրիորդ որ խոստովանիմ թէ շատ անկենցաղագէտ կը վարուիմ ձեզի դէմ. ասոր պատճառը թերևս երկար ատեն սասնկ անծանօթ ու ամայի վայրերու մէջ բնակելով կենցաղագիտութեան օրէնքները մոռցած ըլլալուս վերագրէք. սակայն պիտի խնդրէի ձեր ազնուութենէն որ այդ տեսակ գաղափար մը չունենաք, գիտեմ թէ ձեզի ոտքի վրայ սպասեցնելուս կնամեծարութեան օրէնքներուն դէմ մեղանչած եղայ, սակայն վստահ եմ որ դուք իբր կենցաղագիտութեան օրինաց ամենահմուտ ու բարեկիրթ օրիորդ մը, իմ այս պակասութիւնս լոկ շուարումի մը պէտք է վերագրէք. ստիպուած էի այս կերպով վարուիլ ձեր և ձեր հետևորդներուն կողմէ ինծ ուղղուած հետաքրքրական հարցումներուն պատասխան տալու համար։ Հիմակ որ յուզման առաջին վայրկեանները անցան և ամէնքս ալ զիրար հասկցանք, հասկցայ թէ կնամեծարութեան ու ասպնջականութեան հակառակ էր ցոյց տուած ընթացքս։ Ուրեմն բիւր ներողութիւն խնդրելով, կը հրաւիրեմ ձեզի սա ստուերախիտ ծառերուն տակը հանգստանալու. հոն պատրաստ եմ դարձեալ ձեր հարցումներուն պատասխանելու և ամենայն իրաւամբ ինքզինքս երջանիկ պիտի համարիմ ձեզի նման չնաշխարհիկ խօսակից մը ունեցած ըլլալուս համար։ Անկէ զատ արտակարգ յուզումը ստամոքսը բոլորովին կը թեթեւցնէ և ախորժակը կը բանայ. հոն պատիւը պիտի ունենամ ձեզի սեղանակից ըլլալու որովհետեւ արդէն ընկերներուն հրամայած եմ տեղական սեղան մը պատրաստել։ Կը յուսամ թէ՝ չնորհալի օրիորդ, չի պիտի մերժէք իմ այս խոնարհ հրաւէրս, եթէ նոյն իսկ ձեր խորտիկներուն ամենաջնջին համն ալ չունենայ, հիմայ ձեր ուտելիքները։

Ասոր վրայ ֆրանսացին միևնոյն ասպնջականի չարժուձեւերով միւս ուղեւորները ալ ճաշի հրաւիրեց, որոնք ամենայն սիրով ընդունեցին և ամէնքը մէկանց ճամբայ ելան հանդիպակաց ծառաստանը երթալու համար։ Հոն՝ խոշոր ծառի մը հովանիին տակ տեղական համեստուկ սեղան մը պատրաստուած էր և բնիկները կերակուրի պնակները կը զետեղէին։

Ամայի և անծանօթ այս վայրերուն մէջ, եւրոպական մեթոտով ճաշասեղան մը տեսնել տարաբաղդ ուղեւորներուն համար աներեւակայելի անակնկալ մըն էր. ինքզինքնին ակամայ երազներու աշխարհին մէջ կը կարծէին։ Սակայն Բօլ Տէրվէլ առանց ժամանակ թողելու որ անոնք արտաքոյ մտածումներով ինքզինքնին չարչրկեն, ձեռքը Միս Էլէնի երկնցնելով,

—Ճաշի հրամմեցէք, օրիորդ... և դուք պարոններ բոլոր։

Կենցաղագիտութեան այս ասուեճանին Բարիզի սրահներուն մէջ կարելի էր հանդիպիլ...։ Բօլ Տէրվէլի դէմքը համակ ծիծաղ էր եւ ուրախ բացադանչութիւններով ուղեւորները ճաշի հրաւիրելէ եւ անոնց հաճութիւնը առնելէ յետոյ,

—Ա՛հ, ինչ երջանկութիւն յարեց, չէք կրնար երեւակայել, տեարք, թէ որչափ ձանձրացած էի առանձին ճաշելով... բնաւ մտքէս չէր կրնար անցնիլ թէ այսօր ձեզի նման սիրելի և բարեկիրթ անձերու հետ ճաշելու բաղդը պիտի ունենայի։

Մր. Վիլֆրիտ, որ իրենց բարերարին այս առաքինի ասպնջականութեան վրայ վերջին ծայր ուրախ էր.

— Մեզի ալ չէ՞ք հարցուներ. այլ եւ չէինք կրնար մտքերնէս անցնել թէ երկրի վրայ կերակուր ուտելու երջանկութիւնը պիտի ունենայինք... Հաւատացէք պարոն որ ամէնքս ալ յոյսերնիս կտրած էինք և վայրկենէ վայրկեան ջրվէժին լեռնակուսակ զանգուածին հարուածներուն կ'սպասէինք, որոնք մեզի մինչև գետին խորերը պիտի քշէին և պիտի բաժնէին մեր սիրելի կեանքերն, Սըր Ճէյմս Կուպին ալ իր հովանոցէն։

Վերջապէս ամէնքը միասին սեղան նստելով, տեղացի խոհարարիմը կողմէ եփուած կերակուրները կերան, որոնք այդ պահուն քաղքին խոհարարապետներուն համանդամներէն աւելի ախորժելի ու աւելի համեղ կը թուէին ըլլալ։ Բօլ Տէրվէլ խնդրած էր ուղեւորներէն որ կերակուրի միջոցին իրենց արկածալից կեանքէն և անոր առաջ բերած յուզումէն հեռի պահեն մտքերնին և ախորժակնին կը սրցնէր սրամիտ անեկդոտներով։

Բայց ներկաներուն մէջ Սըր Ճէյմս Կուպին էր որ մտատանջութեան նշան չէր փարատած տակաւին ու կխորհէր անդադար։ Սըր Ղրիգորի Շորթ ալ միեւնոյն վիճակը ցոյց կուտար, սակայն քիչ մը աւելի թեթեւ և անկռահելի։ Եւ մինչ միւս ուղեւորները ուրախ զուարթ կը խօսակցէին, երկու երիտասարդները կասկածի տարուբեր արահետներու մէջ կը թափառէին։

Խե՛ղճ Սըր Ճէյմս Կուպի... այս վերջին հարուածին սոսկալի ազդեցութեան տակ կարծես առ յաւէտ կորսնցուցած էր իր բոլոր յոյսերը, բոլոր ակնկալութիւնները։ Անանկ վայրկեանի մը ուր պիտի վճռուէր թէ հովանոցը պիտի կրնար գտնել, իր բոլոր երազները կը ցնդէին, պղպջակներու պէս կը մարէին։ Անկէց մեծ դժբաղդութիւն կարելի՞ էր երեւակայել։ Ի՞նչ ընելու էր հիմակ, ի՞նչպէս չարժելու էր։ Հէգ մարդը բոլորովին չփոթած, այլայլած էր դէպքերուն այս տարօրինակ հանգամանքէն։ Իրեն համար մէկ ելք, մէկ ճար միայն մնացած է, փութով դառնալ Թոնկոլա և հոնկէց մեկնող առաջին չոգենաւով, երթալ Ամերիկա և հոն սկսիլ դարձեալ հովանոցը փնտռելու։

Սըր Ղրիգորի Շորթ ալ բոլորովին տարբեր բան մը կը խորհէր. Իր մէջ վրէժխնդրութիւնը կը վառէր վառ Ճօն Վակի և Նաթի Բարքէլի դէմ, և զանոնք ձեռք ձգելով իր արդար վրէժը լուծելու և Էլէն չոգենաւը այդ յելուզակներուն ձեռքէն ազատելու համար չուտով Թոնկոլա դառնալ կը փափաքէր. Վեհանձն երիտասարդը կերպով մը չէր ուզեր մարսել իրենց խաղցուած դժնէ խաղը. արիւնը կ'եռար երակներուն մէջ և կը դողդղար թէ ի՞նչպէս պիտի կրնայ փոխադարձաբար սոսկալի խաղ մը խաղալ անոնց. Իր բոլոր խորհուրդը, բոլոր մտասեւեռութիւնը այս էր ահա։

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՕՐԷՆՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ.— Փետրուարին էր որ ամուսնական բարեկարգութեան յանձնաժողովը կազմուեցաւ, խորհրդակցելու համար թէ ո՛րո՛նք են լաւագոյն միջոցները ֆրանսական օրէնսգրքին ամուսնական օրէնքները փոխելու՝ զանոնք պատշաճեցնելու համար արդի պայմաններուն: Այս յանձնաժողովը հիմա իր Օրէնսգիծը պատրաստած ըլլալով, նախագահը՝ Մ. Հանրի Գուլօն պիտի ներկայացնէ Խորհրդարանին երկու ժողովներուն: Յանձնաժողովը ինք իրմով կազմուած է, ոչ թէ Խորհրդարանին կողմէ, բայց Ֆրանսայի հանրային կարծիքը ներկայացնող ա՛յնքան ազդեցիկ անձերէ կազմուած է որ իր եզրակացութիւնները մեծ կշիռ պիտի ունենան Օրէնսդիր ժողովին առջեւ (Ծերակոյտ և Երեսփ. Ժողով): Իր անդամներուն մէջ կան Տիկին Սէվէռինի և Տիկին Աւրիլ որ Սէնթ Քռուայի նման կիներ: Մ. Սէռ որ Ռիվիէռի և Մայնոյի պէս դատաւորներ, նախարար մը՝ Մ. Բուանքարէ, և գրականութեան, գեղարուեստի, ազատական ասպարէզներու և վաճառականութեան մէջ համբաւաւոր մարդիկ: Օրէնսգծին նախաբանին մէջ ըսուած է թէ յանձնաժողովին կարծիքով ամուսնութեան օրէնքը տագնապալից շրջանէ մը կ'անցնի, և թէ ամուսնանալու պայմանագրութեան յօդուածները և եղանակը պէտք է բարեփոխուին, որովհետեւ, հակառակ պարագային, կը վախցուի որ բոլորովին զանց ընեն մարդիկ ամուսնութիւնը: Օրէնսգիծը այս եզրին վրայ հիմնուած է: Ամուսնութեան պայմանագրութեան ձեւերը պէտք է դիւրացնել, ծանր պայմանները և ապացուցիչ ձեւակերպութիւնները պէտք է բառնալ, և կը յուսացուի թէ արդիւնքը պիտի ըլլայ աւելցնել բուն ճշմարիտ ամուսնութեանց — այսինքն սիրոյ վրայ հիմնուած ամուսնութեանց — թիւը:

Այր և կին պէտք է հաւասար իրաւունքներ ունենան, և միեւնոյն պատասխանատուութիւնը: Ամուսնալուծումը նկատուած է իբրեւ հարկաւոր չարիք մը, և երբեմն ալ հարկաւոր դարման մը: Ցաւալի լաւագոյն է, աւելի բարոյական, աւելի պատշաճ է լուծել դժբախտ ամուսնութիւն մը քան յաւերժացնել զայն: Օրէնսգիծը կ'աշխատի դիւրացնել շղթային ծանրութիւնը, անոր խորտակումը արգիլել, կարելի եղածին չափ ազատութիւն տալ ամուսնական կապին մէջ մտնողներուն, իրենց ծագման պահանջումներուն համաձայն, և նկատի առնելով ա՛յն սկզբունքները՝ որոնց վրայ հաստատուած է ընկերութիւնը: «Երկու սեռերուն քաղաքացիական հաւասարութիւնը արդի օրէնքին հիմնական մէկ սկզբունքն է», կ'ըսէ Օրէնսգիծը, և Օրէնսգիծը միջոցներ գտած է բառնալու բոլոր այն պարագաները՝ որոնց ներքեւ հիմա կիները սուտ կը խօսին ա՛յն կէս մը գերի կացութեան պատճառաւ, որուն ենթարկեցին զանոնք Ֆրանսայի Քաղաքային Օրէնսգրքին խմբագիրները՝ հետեւելով Հռոմէական իրաւաբանութեան սկզբունքներուն: Ֆրանսայի մէջ ամուսնացեալ կին մը իր գոյքերուն և շահած թոշակներուն վայելման և գործածութեան մասին պէտք է ունենայ անգլիացի կիներուն արտօնութիւնը, ինչպէս կ'օրէնադրէ անգլ. Բարլամէնթին մէկ օրէնքը: Բայց նոր առաջարկութեանց հեղինակները աւելի առաջ կ'երթան: կը պահանջեն որ մէկ բանի մէջ հաւասարութիւնը հաւասարութիւն ըլլայ նաեւ ամէն բանի մէջ, և թէ ամուսնալուծում պահանջելու պարագային կինն ալ էրիկ մարդուն նման հաւասար պահանջում ընելու իրաւունք ունենայ: Կնոջ տրտունջները գոհացնելու մասին ա՛յնքան ուշադրութիւն ընծայուած է որ յանձնաժողովին առաջարկութիւնները կրնանք անուանել «Օրէնագիծ՝ պաշտպանելու և ազատագրելու համար ամուսնացեալ կիները:» Բացայայտ է թէ ամուսնալուծման անվորութիւնը մշտակայ սպառնալիք մըն է կնոջ ապագային ապահովութեան, կ'ըսէ Օրէնսգիծը, բայց կ'ըսուի նաեւ թէ կնոջ շահուն համար ամուսնալուծման դիմելու դիւրութիւնները պէտք է աւելցուին քան թէ նուազեցուցուին, և թէ կինը պէտք է գիտնայ թէ այսպիսի պարագաներու մէջ իրեն մասին պաշտպանութեան և վարձուց.քի միեւնոյն եղանակը պիտի գործադրուի:

ՏՐԷՅՖԻՒՍԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ. — Ընդհանուր դատախազ Պոտուէն Տրէյֆիւսի դատին վրայ իր ճառը վերջացուց Վճռաբեկ Ատեանին առջեւ, երեք նոր իրողութիւններ պարզելով: Ցոյց տուաւ թէ խոշոր թղթածրարներուն կազմակերպութեան վաւերաթուղթերը, որոնց համար ըսուեցաւ թէ Տրէյֆիւս գողցեր է, 1904ին գտնուեցան Սպայակոյտին Գաղտնի Տեղեկութեանց Դիւանին մէջ, ուր կը գտնուէին միշտ: Ընդհանուր դատախազը յետոյ ցոյց տուաւ թէ օտար զինուորական կցորդի մը կողմէ ուրիշի մը գրուած նամակին մէջ գտնուած «Տ» (D) սկզբնատառը նախապէս «Բ» էր և յետոյ «Տ»ի փոխուած: Երրորդ նոր իրողութիւնը կը վերաբերի զօրահանութեան համար ռազմագիտական երկաթուղիներուն գործին: Ըսուած էր թէ այս մասին վաւերաթուղթերը գողցած էր Տրէյֆիւս, և այս պարագան մեծ կշիռ ստացած էր Տրէյֆիւսի յանցապարտութիւնը որոշելու համար: Ընդհանուր դատախազը բացատրեց թէ այդ թուղթը 1894 Ապրիլ թուականը կը կրէր, և յայտարարեց որ թուականը գնդապետ անձնապահ Հանրիի ձեռագիրն էր: Ընդհանուր դատախազը ցոյց տուաւ նաեւ որ Գաղտնի Տեղեկութեանց Դիւանին արձանագրութեանց համաձայն թուղթին թուականը 1895 Ապրիլ էր: Տրէյֆիւս այդ միջոցին Սատանայի կղզին կը գտնուէր, և հետեւաբար այդ թուղթը ինք գրած չէր կրնար ըլլալ: Ուստի ընդհանուր դատախազը խնդրեց Վճռաբեկ Ատեանէն բեկանել Ռէննի զինուորական ատեանին վճիռը առանց նոր դատավարութիւն հրամայելու: Էսթէրհազի և Տրէյֆիւս հաւասարապէս կարեւոր պիտի ըլլան դատավարութեան մը միջոցին, և երկուքն ալ պէտք է ներկայանան. բայց որովհետեւ Էսթէրհազի Ռէննի Ատեանին կողմէ անպարտ արձակուած է, և հետեւաբար չի կրնար Տրէյֆիւսի հետ ամբաստանուիլ, նոր դատավարութիւն մը անհետեւանք պիտի ըլլայ:

ՄՐ. ՐՈՒԶՎԷԼԹ ԻՆՉՊԷՍ Կ'ԱՆՑԸՆԷ ԻՐ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ.— Ամերիկեան նախագահը իր ամառնային արձակուրդը կ'անցընէ Լօնկ Այլէնտի Օյսթըր Պէյ, իր նախահայրերուն բնակարանին մէջ, իր կնոջ և պզտիկ Րուզվէլթներուն հետ: Կարելի եղածին չափ նախագահը մտադիր է հանգիստ ընելու, որուն պէտք ունի, բայց իր նախագահական պաշտօնին բոլոր բազմակնճիռ զբաղումները իրեն ընկերացած են իր մենարանին մէջ: Իրեն մօտ ունի քարտուղարներ, սղագիր գրագիրներ, հեռագրողներ, և պահակներ: Այնպէս որ Մր. Րուզվէլթ արձակուրդի միջոցին ալ նոյնքան կ'աշխատի որքան Ուաշինկթընի Սպիտակ Տան մէջ: Մինչ կայ անհուն թիւ մը թղթակցութեան, թէ՛ անձնական և թէ պաշտօնական: Նախագահը իր պարապոյ վայրկեանները կ'անցընէ ձի հեծնելով, իր զաւակներուն հետ թէնիս խաղալով, փայտ կտրելով, և երբեմն ալ գիշերը կ'անցընէ անտառին մէջ կտաւէ տաղաւարի տակ, մանաւանդ հաճոյք պատճառելու համար իր զաւակներէն Արչիին և Քէրմիթին: Մանչերը կը թիավարեն և կը մարզուին նշանառութեան մէջ, նախագահը ինք կը սորվեցնէ իր զաւակներուն հրացան գործածելու կերպը: Կ'ըսէ թէ ամերիկեան քաղաքացի մը իր դաստիարակութիւնը աւարտած չըլլար մինչեւ որ քիչ շատ վարպետ նշանառու մը չըլլայ: Նախագահը կը բնակի ըստ բաւականին ընդարձակ փայտաշէն տունի մը մէջ, պատշգամներով, երեք մղոն հեռի Օյսթըր Պէյ քաղաքէն, ուր երբեմն կ'այցելէ, յաճախ խօսակցելով ծերունի բնակիչներուն հետ, որոնք իր մանկութենէն կը ճանչնան զինքը:

Այս տարի Տիկին Րուզվէլթի աջքաղուն է ընկերային պարտաւորութեանց մէջ Օր. Էթէլ Րուզվէլթ, 14 տարեկան, որ իր քրոջը՝ Ալիսին յաջորդած է, այժմ Տիկին Լօնկուըրթ: Էթէլ Ալիսին նման հիմա կարեւոր անձնաւորութիւն մըն է ո՛չ միայն Սպիտակ Տան, այլ և Օյսթըր Պէյի մէջ, ուր իր պարզասիրութեամբ և սքանչելի շարժուձեւերով Օր. Ալիսի տեղը կը բռնէ արժանապէս: Ամառնային եղանակին մէջ պիտի օգնէ իր մօրը՝ պաշտօնական ընդունելութիւններու և հացկերոյթներու ժամանակ:

ՏԻԿԻՆ ՄԷՐԷԼԼԻԻ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՄԸ.— Ամէնքդ ալ կը ճանչնաք Տիկին Մէրէլլին, այն գեղանի կինը, որ պանքայի գող Կալլէյի հետ հարաւային Ամերիկա գնաց: Մէրէլլի վերջապէս օձիքը ազատեց իր ամուսին Մ. Սօհէյէն, և հիմա կրնայ շարունակել ի՛նչ տեսակ կեանք որ ուզէ: Երկար ատենէ ի վեր խնդիրը առկախ կը մնար, բայց վճիռը յանկարծ տրուեցաւ Բշ. օր: Մ. Սօհէյի փաստաբանը յայտարարեց թէ աւելորդ է երկարաբանել Մէրէլլիի անցուցած կեանքին և արկածներուն վրայ: Ամուսնալուծմանց դատարանին նախագահը համաձայն գտնուեցաւ այս մասին և վճիռը տուաւ: Տիկին Մէրէլլի առ այժմ Քաֆէ-Շանթանի մէջ պիտի երգէ:

ԾՈՎԱՅԻՆ ՕՁ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ. — Անգլիոյ ծովային նհանգ մը, Դէլֆինի տեսակէն բռնուեցաւ Բշ. օր Միջերկրականի մէջ Ալժէրի մօտ: Այս ծովային հրէշը նախ և առաջ տեսաւ ծովեզերքին պահակներէն մին, որ բնիկները կանչեց: Ասոնք եկան հրացաններով, տապարներով, դանակներով, և սկսան կրակ ընել ճիւաղին վրայ, որ ծովեզերքին կը մօտենար: Նոյն միջոցին Պէնի-Պէլլիտո գիւղէն քանի մը հոգի կը լուացուէին ծովեզերքին մօտ: Հրէշը լողալով, մերձենալով, ջուրերու մէջ կը խփվտէր եզերքէն երկու հարիւր ետրտայի չափ հեռու: Բնիկները ջուրը մտան դիմաւորելու համար նհանգը, որ ինք իր վրայ դառնալով կարծես կը փախչէր ճակատամարտ մղել անոնց դէմ: Երկու գնդակ արձակուեցաւ անոր վրայ, որ մռնչելով և փախչելու ձեւ մը ըրաւ: Երկու հարուած եւս, և մերձեցաւ աւազին մէջ: Ասոր վրայ բնիկները, այր, կին և տղայ, յարձակեցան ամէն տեսակ զէնքերով և սպաննեցին զայն: Ցետոյ գազանը սլիքներէն դուրս քաշեցին ութսուն երկոտսարդներ քով քովի: Բոլոր միջոց փոխտեցին և երկու ժամ վերջ կմախքը միայն մնացած էր: Կենդանին 17 ոտնաչափ երկայն էր, մէջքը միայն 10 ոտնաչափ: Զօրս թնիս կը կշռէր, և ոսկրները խիստ կարծր են, այնպէս որ բազմաթիւ հարուածեան հրացանի մը գնդակը կրնայ տափակնալ անոր ճակատի ոսկորին վրայ: Տեղական իշխանութիւնը կմախքը պահեց որ պիտի ղրկուի գիտուններուն կողմէ:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏՐԱՄ ՄԸ ԱՒՍՏՐԻՈՅ ՄԷՋ.— ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐՈՒՆ ՈՃԻՐԸ.— Սթիրիոյ Լէօպէն քաղաքին մէջ Բշ. սկսաւ դատավարութիւն մը, որ քանի մը երդուեալներուն ուշադրութիւնը պիտի գրաւէ: Երկու քոյրեր Ֆրիտէրիքէ և Մարի Ցէլլեր, ամբաստանուած են թէ Ցունուար 25ին Լէօպէնի մօտ փոքր հովիտի մը մէջ սպաննած են Մարի Մէյէրը, երբեմն խոհարարուհի: Դատավարութիւնը հետաքրքրական պիտի ըլլայ, որովհետեւ թէ՛ զոհը և թէ ամբաստանեալները շատ տարիներ Վիէննա ապրած են: Ֆրիտէրիքէ Ցէլլեր 28 տարեկան է, և իր քոյրը Մարի տասը տարի աւելի փոքր: Երկուքն ալ աղւոր աղջիկներ են: Մին քանի մը տարի սպասուհի եղած է Վիէննայի պատուաւոր պանդոկներուն մէջ, և միւսը երաժշտաարահի մը ճաշասեղանին սպասուհիներէն մին: Կրտսերագոյնը իրաւամբ գէշ անուն հանած է, և մեծն ալ յարաբերութիւններ սկսած էր տածել ստորին դասակարգէ երգիչի մը հետ, որուն հետ պիտի կարգուէր անցեալ Փետր.ին: Զոյգին դիտաւորութիւնն էր Ռուսիա երթալ: Զիրենք իրարու հետ կապող կապը սա՛ էր թէ Ֆրիտէրիքէ իր հօմանիին կը յանձնէր որ քանի մը հարիւր ոսկի օժիտ կ'ակնկալէր իր հօրմէն: Այս գումարը ձեռք բերելու համար երկու քոյրերը զանազան փորձեր ըրին, և վերջապէս Մարի Մէյէրը սպաննելու և անոր խնայած դրամները գրաւելու գաղափարին յանգեցան:

Քանի մը տարի առաջ Մէյէր 1,000 ոսկի ժառանգած էր, և որովհետեւ այլեւս սպասաւորութենէ ձանձրացած էր, իր այդ դրամով սկսաւ համեստ կեանք մը վարել: Դեկտ. 24ին յանկարծ անյայտ եղաւ, բայց Վիէննայի մէջ իրարանցում չպատճառեց այս անյայտացումը, որովհետեւ ամէն մարդ գիտէր թէ Մէյէր իր խնկելին փեսոր ընող կին մըն էր: Ֆրիտէրիքէ խորամանկութեամբ մը հանգուցեալին անձը կեղծեց և իր ընդունած քանի մը նամակները իբրեւ Մարի Մէյէր կը ստորագրէր, և նոյն իսկ այդ անունով սենեակ մը վարձեց, որ արձանագրուեցաւ ըստ այժմ ոստիկանութեան տետրակին մէջ: Ցունուար 26ին Լէօպէնի մօտ ձիւնին մէջ կնոջ մը դիակը գտնուեցաւ և ոստիկանութիւնը երկար ատեն չկրցաւ ո՛վ ըլլալը ստուգել, և սկսաւ հետամուտ ըլլալ երկու կիներու, որոնք յաճախ զոհին ընկերացած կ'ըլլային: Լրագիրներուն մէջ հրատարակուեցան քանիցս կնոջ պատկերը և հագուստները: Վերջապէս դերձակուհի մը յայտարարեց թէ հագուստները Մարի Մէյէրի կը վերաբերէին, բայց երկար ատեն կարեւորութիւն չտրուեցաւ այս խօսքին, որովհետեւ Մարի Մէյէր ողջերուն ցանկին մէջ կը համարուէր, յանձին Ֆրիտէրիքէի: Վերջ ի վերջոյ ոստիկանութիւնը անունի փոփոխման կասկածը ունեցաւ և անմիջապէս Ցէլլեր քոյրերը բանտ առաջնորդուեցան: Մէյէրի գոյքերը Ֆրիտէրիքէի քով գտնուեցան, և ապացուցուեցաւ թէ ինչպէս երկու քոյրերը հրապուրած էին Մէյէրը զբօսական պտոյտ մը ընել Ստիրիոյ Ալպեանց մէջ, ուր մարդ մը կը փափաքէր եղեր ճանչնալ Մէյէրը անոր հետ կարգուելու համար: Սպանութենէն քանի մը ժամ վերջ Ֆրիտէրիքէ տեսաւ որ ոճիրը անօգուտ էր, որովհետեւ անկարելի եղաւ իրեն Մէյէրի դրամը գանձել խնայողական պանքայէն: Մարի Ցէլլեր խոստովանութիւն ըրաւ բանտին մէջ, և սակայն վերջը ուրացաւ:

Բշ.ի նիստին մէջ ամբաստանագրին ընթերցումը երեք ժամ տեւեց: Բժիշկները կարծիք յայտնած են թէ կնոջ վիզը չուանի մը անցուած է, թէ գաուիթափէ մը վար քաշուած է: Ֆրիտէրիքէ յայտարարեց թէ ինք անմեղ էր, որովհետեւ Մէյէրն էր որ իրմէն և իր քրոջմէն խնդրեց օգնել իրեն անձնասպան ըլլալու:

Երեքշաբթի օրուան դատավարութիւնը ամէնէն աւելի յուզումնառիթ եղաւ: Երկուշաբթի երկու քոյրերն ալ կ'ուրանային, և ամբաստանեալները կողկողագին արտասուելնուն համար հարկ եղաւ նիստը վերջացնել: Բայց Գշ. առաւօտ դատական բոլոր պաշտօնատարները նոյն իսկ իրենց փաստաբանը աշխատեցան ապացուցանել Ֆրիտէրիքէի թէ իր և իր քրոջ շահը կը պահանջէ որ յանցանքը խոստովանին: Երկարատեւ ներքին պայքարէ մը վերջ, Ֆրիտէրիքէ Ցէլլեր խոստովանեցաւ մարդասպանութիւնը, նկարագրելով թէ ի՛նչպէս գործուեցաւ ոճիրը, և ջանաց ցոյց տալ իր քրոջ անմեղութիւնը:

Օրէնքին նայելով, Ֆրիտէրիքէ կախաղանի պիտի դատապարտուի, իսկ իր քոյրը, որ նուազագոյն աստիճանի մը վրայ յանցաւոր է, հաւանականաբար պիտի դատապարտուի երկարատեւ բանտարկութեան մը: Բայց նկատելով որ ոճիրին շարժառիթը կողոպտել չէր, այլ օժիտ ձեռք բերել ամուսնանալու համար իր նշանածին հետ, զոր շատ կը սիրէր, թերեւս մահու պատիժը ցկեանս բանտարկութեան փոխուի:

ՆԱԹԱԼԻ Զօլուներուն դէմ Անգլիացւոց մղած վերջին կռիւին մէջ 300ի մօտ ըմբոստներ սպաննուեցան: Գործողութիւնք կը շարունակուին և Անգլիացիք հետզհետէ աւելի դժուարութեան կը պատահին:

ՋԷՆԸՆՆԷՅՈՒԹԻՒՆԸ. — Հռոմէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Իտալիոյ արտաքին գործոց նախարար Սինեոր Թիթթօնի դիմում ըրած է անգլիական և ֆրանսական կառավարութեանց մօտ, համաձայնութեան մը գալու Գերմանիոյ և Աւստրիոյ հետ աստիճանաբար զեղչելու համար սպառազինութիւնները:

ՄԱՐԴԱՍՊԱՆ ՄԻԼԻՈՆԱՏԷՐԸ. — Հարրի Թոյի մայրը Անգլիա ժամանեց, տակաւին չի գիտեր իր զաւկին ոճրագործութիւնը և բանտարկութիւնը: Իրաւ է թէ շոգենաւը Ատլանտեանի բացերը եղած ժամանակ անթել հեռագրութեամբ լուրը ծանուցուեցաւ և ըստ սովորութեան ծանուցմանց տախտակին վրայ գրուեցաւ ի տես բոլոր ուղեւորներուն, բայց բարեբաղդաբար տիկինը շատ չէր խառնուեր բազմութեան մէջ, և նաւապետը իմացածին պէս հրամայեց տախտակը վար առնել: Անգլիոյ ծովեզերքը հասնելուն պէս լրագիր ուզեց, բայց դարձեալ նաւապետին հրամանաւ Թոյի սպանութեան վերաբերեալ հատուածները կտրուելէ վերջ լրագիր տրուեցաւ իրեն: Լուրը ձեւով մը իրեն պիտի հաղորդէ իր փեսան՝ Եարմաութի կոմսը:

ՉԷՄՊԸՐԼԷՆԻ ՕՐԸ. — Մր. Չէմպըրլէնի ծննդեան 70րդ տարեդարձը տօնելու համար մեծ պատրաստութիւններուն յայտագիրը հրատարակուեցաւ երեքշաբթի օր: Ցայտագիրը Մր. Չէմպըրլէնի կեանքին գլխաւոր պատահարները պատմելէ և անոր հանրային զանազան պաշտօններուն քաղուածքը ընելէ վերջ հանդէսներուն պարագաները կու տայ:

Շաբաթ օր Լոնտոնի Լորտ Քաղաքապետը և քաղաքապետուհին ի պատիւ Տէր և Տիկին Չէմպըրլէնի հացկերոյթ մը տուին: Ներկայ էին 220 հրաւիրեալներ: Անգլիոյ թագաւորին կենաց բաժակաճառերէն վերջ Լորտ Քաղաքապետը բաժակ առաջարկեց իր «հիւրեր»ուն կենացը, և նախորդ գաղթային նախարարին գործունէութիւնը դրուատեց, ի վեր հանելով անոր հանրային մեծամեծ ծառայութիւնները, և մանաւանդ Բրիտանական Պետութեան և Գաղթավայրերուն սերտ համաձայնութեան մասին տարած ջանքերը: Մր. Չէմպըրլէն պատասխանեց, շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած այս բացառիկ պատիւին վրայ, և դարձեալ շեշտելով Անգլիոյ և գաղթավայրերուն սերտ միութիւնը: Պիրմինկէմի եպիսկոպոսը բաժակ առաջարկեց Քաղաքապետական Խորհուրդին կենացը, որուն պատասխանեց Սըր Թօմաս Շալաս: Հացկերոյթէն վերջ Մր. Չէմպըրլէն և խումբը օթօմոպիլներով գացին քանի մը հանրային զբօսավայրեր, ուր բազմաթիւ դպրոցականներ և քաղաքացիներ հաւաքուած էին: Խանդավառ ընդունելութիւն եղաւ մեծ նախարարին, ինչպէս կը կոչուի Չէմպըրլէն, և նաեւ օթօմոպիլներու երկար թափոր մը: Առաջին անգամ այցելեցին Վիքթօրիա Բառք, յետոյ Ուօրտ Էնտ Բառք: Ասթօն Բառքին մէջ Տէր և Տիկին Չէմպըրլէն թէյ առին Աստոնի արուարձանին քաղաքապետին հետ: Այս և ուրիշ բոլոր Բառքերուն մէջ տեղի կ'ունենային նուագահանդէսներ, երաժշտախումբեր ընտիր կտորներ կը նուագէին, և պարեր կը պարէին, Ուօրտ Էնտ Բառքին մէջ Չէմպըրլէնի նուիրեալ վերաառութիւններ կախուած էին, որոնցմէ մին Չէմպըրլէնի սիրական օրքիտէի տունկ մը, որ յանկարծ Չէմպըրլէնի կենդանագրին փոխուեցաւ: Պարզուած էր նաեւ Նիակարայի ջրվէժին հրատեսիլ մէկ պատկերը և ճիճնակոյտ մը: Ասթօն Բառքին մէջ կը շողային Տէր և Տիկին Չէմպըրլէնի և իրենց որդւոյն նախորդ ելմտական նախարար Մր. Օսթին Չէմպըրլէնի հրաւառ կենդանագրերը: Նոյնօրինակ տեսարաններ նաեւ միւս Բառքերուն մէջ: Թափորին անցած ճամբան զարդարուած էր դրօշներով և գոյնզգոյն ժապաւէններով, նաեւ Մր. Չէմպըրլէնի կենդանագիրը կրող բազմաթիւ շքադրամներով:

*** Էտուարտ Թագաւոր շնորհաւորական հեռագիր ուղղեց Մր. Չէմպըրլէնի:

Այսօր Բշ. Պինկլի Հօլի մէջ մեծ ցոյց մը տեղի կ'ունենայ ի պատիւ Չէմպըրլէնի, նախագահութեամբ երեսփոխան Մր. Ֆրէնսիս Լօուի, ներկայ պիտի ըլլան զանազան ընկերակցութեանց կողմէ բազմաթիւ պատուիրակութիւններ: Մր. Չէմպըրլէն մէկ ժամ պիտի խօսի: Երեկոյին ջահազնացութիւն տեղի պիտի ունենայ, և ջահակիրները երկու խումբերուն միջեւ Մր. Չէմպըրլէն յաղթանակաւ պիտի առաջնորդուի Հայլպէրի: Հրախաղութիւն պիտի կատարուի Քէնըն Հիլ Բառքի մէջ, ուր կախուած են նշանաբաններ անգլիական գաղթավայրերէն, Աւստրալիոյ, Քանատայի, Նոր Զէլանտայի դինանշաններով, Վիքթօրիա Ջրվէժը Զամպէզիի վրայ, և Վեսուվ լերան մէկ բորբոքումը, և հրեղէն մեծ պատկեր մը 900 քառակուսի ոտնաչափ: Քէնըն Հիլ Բառքէն մինչեւ Հայլպէրի չինական կանթեղներու թափոր մը պիտի կազմուի:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Վիէննական թերթերը կը գրեն թէ հելլէն կառավարութեան կարգ մը արարքներուն և ընթացքներուն պատճառաւ մեծ Տէրութիւնները անոր մօտ հաւաքական ձեռնարկներ ըրած են: Զանազան տէրութեանց դեսպանները այցելելով Յունաստանի Արտաքին գործոց նախարարին, յայտարարեր են թէ հելլէն կառավարութեան հետեւած քաղաքականութեան վրայ կը զարմանան: Յունաստան խոստացեր է դեսպաններուն ասկէ ետք աւելի շրջահայեաց ըլլալ:

ՔՐՈՆԻԿ

ԵՐԶՆԿԱՅԻ նախկին Առաջնորդ Տ. Արտաւազդ Վրդ. որ Ակնայ Առաջն. Տեղապահ նշանակուած էր, հեռագիր մը ուղղելով Պատրիարքարան կ'իմացնէ թէ Շապին Գարահիսար հասած՝ կը սպասէ իրեն ղրկուելիք հրահանգին:

ՄԵՍՐՈՊ Ա. ԵՊՍԿ. Սուքիասեանի վիճակը անցեալ Եշ.էն ի վեր զգալապէս բարւոքած է: Զինքը դարմանող բժիշկները Տօքթ. Ինճէեան և Գափամաճեան փաստաձօրէն կը յայտարարեն թէ ամէն վտանգ այլեւս անհետացած կրնայ համարուիլ: Սրբազանին հիւանդութիւնն էր Hémorrhagie intestinale (Աղեաց արիւնահոսում), որ այլ եւս դադրած է:

ՊԱՐՏԻԶԱԿԷՆ կը գրեն մեզի.— Հինգշաբթի օր Ս. Թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ տօնին առթիւ, Ներսէս—Շուշանեան վարժարանի մէջ դպրոցական հանդէս մը կատարուեցաւ: Ժամարար Տ. Ներսէս քահանայ երգեցիկ մանուկներու, քահանայից, Թաղական Խորհրդոյ անդամոց և խուռն բազմութեան հետ, առաջնորդուեցաւ հանդիսասրահ որ ծաղիկներով զարդարուած էր: Վարժարանին Ուսուցիչ Ա. Հաբէլեան էֆէնտի Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ վրայ խօսեցաւ: Ցետոյ յաջորդաբար ճառախօսութիւններ կատարեցին Պրք. Սարգիս Քիւթնէրեան, Հմայեակ Միքայէլեան, Արշաւիր Հաբէլեան և Օր. Վարսենիկ Բարսեղեան: Հաբէլեան էֆէնտիի հրաւէրին վրայ Հայ բողոքականաց շրջանի հովիւ Պատ. Խաչիկ Գուլզեան կրօնական ընտիր ատենաբանութիւն մը ըրաւ: Ժամարար Տ. Հօր պահպանիչով և Տէրունական աղօթքով փակուեցաւ այս սիրուն դպրոցական հանդէսը:

ՊԷՐՊԷՐԵԱՆ վարժարանի առողջապահութեան հարցաքննութիւնք կատարուեցան շաբաթ կէս օրէ առաջ, առաջնորդութեամբ դասախօս և վարժարանին բժիշկ Տօքթ. Պենոն էֆ. Պէզազեանի: Ներկաներուն մէջ կը գտնուէին Թաղին քարոզիչ Վեհապետեան Սրբազան, Ներսէս Վրդ. Դանիէլեան, Ուսուցչապետ Ռ. Ց. Պէրպէրեան, Տօքթ. Վահրամ Թորգոմեան, Տօքթ. Աշճեան, Տօքթ. Հինդլեան, Պ. Կարապետեան, Ս. Դաւիթեան, Ա. Նիկողոսեան և Լ. Թաշեան էֆէնտիները: Աշակերտք ամէն հարցումներու յաջողապէս պատասխանեցին և ներկաները մեծապէս գոհ թողուցին ոչ միայն առողջապահութեան, այլ և բժշկութեան մասին իրենց տուած յաջող պատասխաններով:

Կէս օրէ վերջ, կատարուեցաւ տրամաբանութեան քննութիւնը զոր կը վարէր Ուսուցչապետ Ռ. Ց. Պէրպէրեան էֆ.: Ներկայ էին Միհրտիչ եպս., Ներսէս Վ. Դանիէլեան, Պետրոս էֆ. Կարապետեան, Արամ էֆ. Նիկողոսեան, ևն.: Քննութիւնը կատարուեցաւ ֆրանս. լեզուով: Նոյն ճիւղին մէջ ամէնէն յաջող քննութիւնն անցուց Պէրպէրեան էֆ.ի որդին Պ. Շահան Պէրպէրեան, որ՝ սահուն ֆրանսերէնով մը՝ կը բացատրէր տրամաբանութեան ամէնէն խրթին կէտերը:

ԲԵՐԱՅԻ Աղքատախնամը կը ծանուցանէ թէ Մայիս 20էն մինչեւ այսօր հետեւեալ նուիրատուութիւնները եղած են.— Տեարք և Տիկնայք՝ Տօքթ. Դաւիթեան էֆ. իր հօր Ստեփան էֆ. Դաւիթեանի յուղարկաւորութեան առթիւ 65, Արշակ Պօլսեան, Տիկին Շագիկ Պօլսեանի յուղարկաւորութեան առթիւ 20, Տրօկէրի Հայկ Ալլահեան և Ընկ. 20 քիլօ բամպակ և 100 հատ վերակապեր (պանտ), Ցովհաննէս Խորասանճեան գործածուած և շատ լաւ 20 կտոր զգեստեղէններ, Աղքատախնամի ատենապետ Մ. Մարտիրոսեան 15 կտոր փոքր ատամնաբուժական գործիքներ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Շաբաթ առտու, ժամը 3½ին Բերայի Նարեկեան Մանկապարտէզին մէջ սիրուն հանդէս մը կատարուեցաւ, փոքրիկներու կողմէ:

Հանդէսին կը նախագահէր Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ եպս. իր շուրջը ունենալով քահանայից դասը և Թաղ. Խորհրդոյ անդամները:

Մանկապարտէզի փոքրիկները, առաջնորդութեամբ իրենց վարժուհիներուն՝ սրահ մտան աշխոյժ ու համարձակ շարժումներով, վստահ քալուածքով: Ցետոյ կատարեցին մարմնամարզական խաղեր՝ իրենց տարիքէն չսպասուած եղանակաւ: Աչքի զարնող կէտն էր փոքրիկներու կողմէ եղած արտասանութիւններն ու տրամախօսութիւնները, որոնք կրնային մեր շատ մը նախակրթարաններու աշակերտներուն նախանձը շարժել:

Փոքրիկներուն երգերուն դաշնակով կ'ընկերանար Օր. Արուսեակ Դարպասեան, իսկ ջութակը կ'ածէր Օր. Ֆիմի Սարրաֆեան, Բերայի երեք մանկապարտէզներու համակրելի վարիչն՝ Տիկ. Գ. Սարրաֆեանի աղջիկը:

Փոքրիկներուն՝ մէկ տարուան սուղ միջոցին մէջ ձեռք բերած այս յաջողութիւնը՝ արդիւնքն է մեր միակ մանկապարտիզպանուհիին՝ Տիկին Գ. Սարրաֆեանի անդուլ խնամոց և աշխատութեան: Բերայի Թաղ. Խորհուրդը խիստ գոհ ազնուե Տիկնոջ ցոյց տուած այս անդուլ աշխատութեանն, որոշած է վերահաստատել զինքը իր պաշտօնին մէջ՝ իբր ընդհանուր վարիչ Բերայի մանկապարտէզներուն:

Հանդէսը փակեց Տ. Հմայեակ եպս. կարճ այլ գեղեցիկ յորդորական մը խօսելով մանուկներուն՝ որ կրնար նաեւ շատ լաւ պատշաճիլ ամէն ծնողաց ալ: Հաճելի ու մանաւանդ նշանակելի էր որ Բերայի վարժարաններուն Տեսուչ Գ. էֆ. Մարգարեան հոգ ունեցած էր հանդէսը կարելի եղածին չափ կարճ ընելու, որով թէ՛ ներկաները և թէ փոքրիկները հաւասարապէս ո՛չ ձանձրոյթ զգացին և ոչ նեղութիւն՝ հակառակ 39 աստիճան տաքութեան՝ որ կը տիրէր շաբաթ օր:

ԳԱՏԸԳԻՒՂԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Երէկ, ժամը 8ին կատարուեցաւ Գատըգիւղի Մխիթարեանց վարժարանին ամավերջի մրցանակաբաշխութեան հանդէսը՝ ընտրեալ ու հոծ բազմութեան մը ներկայութեան, որոնք փութացած էին գալ մայրաքաղաքիս գրեթէ բոլոր թաղերէն, չզլանալու համար այն գեղեցիկ դպրոցական վայելքէն, որուն գաղափարը կարծես թէ Մխիթարեանց տրուած է:

Եւ իրաւունք ալ ունէին: Վենետիկցի Հայերը, սիրուն փութկոտութեամբ և նուրբ կենցաղագիտութեամբ մը բոլոր հրաւիրեալներուն սիրալիր ընդունելութիւն մը կ'ընէին, առաջնորդելով զանոնք վարժարանին ընդարձակ պարտէզը, ուր սարքուած էր հանդէսը, ընդարձակ վրանի մը ներքեւ: Պարտէզին մէջ կանգնուած էր փոքրիկ բեմ մը՝ որուն ճակատը զարդարուած էր Օսմ. Թուղրայով: Հանդէսին կը նախագահէր Կարինոյ Առաջնորդ Բչուրեան Գերապայծառ, իր շուրջը ունենալով Կեսարիոյ Առաջնորդ Սիսլեան Գերապայծառը, Անտօնեանց Միաբանութեան Աբբահայր Միսսերեանց Գերապայծառ, Արհիմանտրիտ Կոստանդինոս Քոյիմադիս, որ եկած էր ի դիմաց Գատըգիւղի Մետրապոլիտին: Ներկաներուն մէջ կը

տեմմուէյին Իտալիոյ փոխ-Հիւպատոս Մ. Լապիա, Ռէժէոս էֆ. Պէրպէրեան, Հայր Գաբրիէլ վարդապետ Մէնէվիշեան, Տքթ. Պեհոս Պէզազեան, Կուրտիկեան և Հայրիկեան էֆ.ները և այլք։ Հանդէսը բացուեցաւ Համիտիէ քայլերգով զոր վարժարանին երաժշտախումբը կը նուագէր, և որուն ներկայք յոտնկայս ունկնդրեցին և ծափահարեցին։ Ասոր յաջորդեց Հայերէն բանախօսութիւն մը որուն նիւթը թէև լաւ, բայց աշակերտի մը բերնին մէջ շատ խակ ու աւուցիկ հանգամանք մը առաւ։ Ցետոյ Իտալերէն երգ մը, որուն յաջորդեց դարձեալ Իտալերէն երգ մը։ Ապա Թուրքերէն բանախօսութիւն մը՝ որուն մէջ ի վեր հանելով մեր Կրթասէր և Օգոստափառ Վեհապետին ուսման և կրթութեան մասին ունեցած անհուն հոգածութիւնը և խնամքը՝ խորին երախտագիտութիւն կը յայտնուէր ընդհանուր ուսանողութեան կողմէ առ մեր Սիրեցեալ Վեհապետն։ Այս բանախօսութիւնն ալ աւարտեցաւ բուռն ծափերու մէջ։ Ցետոյ Իտալերէն բանախօսութիւն ու գործիկան երաժշտութիւն, ընդմիջմամբ միշտ Իտալերէն մեներգներու ու խմբերգներու, որոնք շատ յաջող կերպով կ'երգուէին։ Հայերէն լեզուաւ արտասանութիւնը՝ մին Ֆրանսուա Գոբէի գլուխ գործոցներէն, զոր արտասանեց վարժարանին յաջողագոյն աշակերտներէն Պր. Վահրամ Փափազեան՝ խլացուցիչ ծափերու և ընդհանուր հաւանութեան արժանացաւ։ Այնքան յաջող կերպով արտասանեց որ՝ հեղինակին երևակայած ու իր նիւթին մէջ խտացուցած բոլոր արհաւիրքը ու անոր պատճառած բովանդակ հոգեկան ու մարմնական տուայտանքները կենդանի կերպով մը պատկերացուց իր դէմքին վրայ։

Երգ Իտալերէն, որուն յաջորդեցին շատ մը երգեցողութիւններ (միշտ Իտալերէն) և մարմնամարզի փորձեր, շատ յաջողապէս, որոնք ցոյց տուին թէ Մխիթարեան Հայրերը գիտեն կատարելապէս մաքին հետ մշակել նաև մարմինը՝ առաջինը զարգացնելով ու զօրացնելով, իսկ երկրորդը ճկուն ու դիւրաթեք ընելով։

Կարգը եկաւ Տեղեկագրի ընթերցման, զոր կարդաց Հայր Հացունի, թէև յստակ, այլ քիչ մը միօրինակ ու եկեղեցական շեշտերով։ Ամէն դպրոցական հանդէսներու մէջ կարդացուած տեղեկագիրներու նման՝ Հայր Հացունի պայմանագրական պարտք մը կատարեց լրացող տարուան մէջ ձեռք բերուած արդիւնքները և յաջորդ տարուան մէջ նկատուելի կատարելութիւնները ու կրթական բարեփոխումները թուելով։

Վերջապէս սկսաւ մրցանակներու և վկայականաց բաշխումը։ Վարժարանին ամէնէն յաջող աշակերտներէն Պրք. Վահրամ Փափազեան (Զ. Դաս), Բենիամին Պագալեան (Ե. Դաս), Վահան Թիւթիւնճեան (Դ. Դաս), Արմէն Կոթոլեան (Գ. Դաս), Անդրանիկ Վարդանեան (Բ. Դաս) ստացան ոսկի մետալներ, իսկ քանիերեք յաջող աշակերտներ ևս ստացան արծաթ մետալներ։ Իսկ այլևայլ ճիւղերու մէջ իրենց ցոյց տուած մասնաւոր յաջողակութեան և ընդունակութեան համար յատուկ նուէրներու արժանացան հետևեալները.

Պ. Յովհաննէս Բրուտեան՝ ծոցի ընտիր ժամացոյց մը՝ նուիրուած Կ.-Պատրիարք Տ. Սապապեան Սրբազանի կողմէ.

Ծոցի ժամացոյց՝ Պ. Լեւոն Համբարձումեանի՝ Վենետիկի Վանուց Աբբահօր կողմէ.

Դրօշմատետր մը՝ (Ալպոմ) Պ. Արմենակ Սիրունեանի՝ Վենետիկեանց տեղւոյս մեծաւոր Հայր Սամուէլ Գանթարեանի կողմէ.

Ծոցի ժամացոյց մը՝ Պ. Սիրուն Գուրապեանի՝ Հայր Ցուսիկ Մէհրապեանի կողմէ.

Արծաթազարդ ժամացոյց՝ Պ. Վահրամ Փափազեանի՝ Հայր Յակոբ Տէրոյեանի կողմէ։

Թղթակալմած մը՝ Պ. Արմէն Կոթոլեանի՝ վարժարանին Տեսչութեան կողմէ։

Ջուլածոյ կաղամար մը՝ Պ. Ահարոն Տատուրեանի՝ Տեսչութեան կողմէ։

Դրպանի ժամացոյց մը՝ Պ. Տիրան Փափազեանի՝ Տեսչութեան կողմէ։

Լուսանկարչական գործիք մը՝ Պ. Օննիկ Նազարէթեանի՝ Տեսչութեան կողմէ։

Դրպանի ժամացոյց մը՝ Պ. Բենիամին Պագալեանի՝ Տեսչութեան կողմէ.

Պատկերատետր մը՝ Պր. Արտաշէս Կիւրճեանի Տեսչութեան կողմէ։

Ռէվէյլ-մաթէն ժամացոյց մը՝ Պ. Կարապետ Մատաթեանի՝ Տեսչութեան կողմէ։

Դարձեալ Ռէվէյլ Մաթէն ժամացոյց մը՝ Պ. Անդրանիկ Վարդանեանի՝ Տեսչութեան կողմէ։

Նուէրները, մետալները, և տրուած գրքերը՝ յաջողագոյն աշակերտաց կը յանձնուէր ներկաներուն միջոցաւ։

Այս արարողութեան աւարտեւէն վերջ, Իտալական փոխ-հիւպատոս Մ. Լապիա ոտք ելլելով Իտալերէն լեզուով բանախօսութիւն մը ըրաւ, գովաբանելով վարժարանին պաշտօնէութեան ջանքերը, որոնք կը նկրտին, բսաւ, իրենց հասարակութեան, երկրին և պետութեան օգտակար քաղաքացիներ և բարի անհատներ պատրաստելու։ Ապա ոտք ելլելով Արհիմանդրիտ Կոստանդինոս Քոյիտաղիս՝ ի դիմաց Պատրիարքի Մետրապոլտին շնորհակալութիւն յայտնեց՝ կար ու կարիք մաղթելով նաև վարժարանին տեսչութեան՝ իրենց ձեռնարկին տևականութեան համար։ Հուսկ ապա Կարնոյ Առաջնորդ Բիւրեան գերապայծառ ոտք ելլելով ազդու ու գեղեցիկ յորդորական մը ուղղեց ուսանողաց՝ յորդորելով զանոնք գործադրել նաև կեանքի գործնական պայքարին մէջ՝ ինչ որ հոս իբր աշակերտ՝ ուսան բարի ու գեղեցիկ։

Հանդէսը վերջացաւ վարժարանին ուսանող Սանուց երաժշտախումբին գեղեցիկ մէկ կտորովը, ու ներկայք ցրուեցան՝ ի զուր ժամանակ ու քրտինք վատնած չըլլալու ուրախ գիտակցութեամբ։

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ
ՏԻԿԻՆ ԵՒՓԻՄԷ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆԻ

Շաբաթ օր ժամը 4ին Թօփգաբուի Ս. Նիկողայոս եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ յուղարկաւորութեան հանդէսը վաղամեռիկ Տիկին Եւփիմէ Ա. Տ. Անդրէասեանի։ Եկեղեցին լեցուն էր յուղարկաւորներու խուռն բազմութիւնով մը։ Մեռելական արարողութեան կը նախագահէր Տ. Արիստակէս եպսկ. Վանքեան իր շուրջը ունենալով Տ. Յակոբ Շահպազեան և Տ. Եղրաս վրդները և բազմաթիւ քահանաներ ու դպիրներ։ Արարողութենէն ետք բեմ ելաւ Տ. Արիստակէս Սրբազան և յուզիչ դամբանական մը խօսեցաւ, ի վեր հանելով այս մահուան պարզած տխուր և անմխիթար կողմերը։ Սրբազանը երկնային մխիթարութիւն հայցեց հանգուցելոյն ամուսնին Տիար Անդրէաս Տ. Անդրէասեանի, որ կարենայ տոկուն կամքը ունենալ խնամելու իր որբուկները։

Ներկաներուն մէջ կը նշմարուէին.— Տեարք՝ Մկրտիչ Մելիքեան, Թադէոս Եքմէքճեան, Սիմոն Ալթունճեան, Միհրան Միւզէճեան, Միհրան Սինանեան, Ստեփան Սինանեան, Յովհաննէս Հայրապետեան, Կարապետ Արսէնեան, Նազարէթ Գարագաշեան, Խաչիկ Ֆէսճեան, Գրիգոր Մէհտէրեան, Տօքթ. Ճէզայիրլեան, Քերովբէ Թուլումպաճեան, Նշան Սանասարեան, Արմենակ Շալճեան, Գրիգոր Յովհաննէսեան, Լեւոն Եազըճեան, Օննիկ Մէհտէրեան, Պետրոս Զիմմեան, Մաքսուտ Խանճեան, Ստեփան Փափազեան, Գարեգին Ճիլաճեան, Միհրան Աչճեան, Ալիքսան Տէօվլէթեան, Ալիքսան Զընտանճեան, Թադէոս Տէօվլէթեան, Յակոբ Կարագեան, Արտաշէս Ունճեան, Գարեգին Էլմասեան, Երուանդ Մկրտիչեան, Յովհաննէս Խաչմանեան, Յովհաննէս Փափազեան, Յարութիւն Քէչէեան, Արամ Գալըպճեան, Համբարձում Քէրիմեան, Օննիկ Զաքարեան, Կարապետ Արսէնեան, Զարեհ Ֆընտըգլեան, Աղասի Անդրէասեան, Լեւոն Թաշեան, Սրբիկ Էգնեան, Արթաքի Արզիկեան, Կարապետ Արիֆեան, Միհրան Տ. Ահարոնեան, Մկրտիչ Շահնազարեան, Պօղոս Ալպոյաճեան, Միհրան Զէնոբեան, Արմենակ Թէլլալեան, Մաքսուտ և Գրիգոր Գասպարճեան, Գրիգոր Սէմէրճեան, Միսաք Յակոբեան և այլ բազմաթիւ անձնաւորութիւններ։

Ծաղկեպսակ ղրկած էին՝ Թօփ Գաբուի Թաղական Խորհուրդը, Ազգ. վարժարանի պաշտօնէութիւնը, Մկրտիչ էֆ. Փափազեան, Կարապետ Գազազեան և այլք.

Ցետոյ դագաղը փոխադրուեցաւ Պալըգլըի Ազգ. գերեզմանատունը և սեւ հողերուն յանձնուեցաւ տարաբաղդ Եւփիմէն։

Ներկաները մի առ մի իրենց ցաւակցութիւնները յայտնեցին հանգուցելոյն ամուսնոյն Անդրէաս էֆ.ի և Անդրէասեան ընտանիքին ներկայ անդամներուն։

Մեր ցաւակցութիւններս:

Տ. Անդրէասեան ընտանիքը և պարագաները իրենց սրտագին շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն անոնց որ ներկայ գտնուելով ողբացեալ ՏԻԿԻՆ ԵՒՓԻՄԷ Տ. ԱՆԴՐԱՍԵԱՆԻ յուղարկաւորութեան իրենց ցաւակցութիւնը յայտնեցին այս տխուր առթիւ։

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. ԽՈՐԷՆ ՔՀ. ՊՕՂԻԿԵԱՆ (Լազբէյ).— Ձեր թերթը ըստ առաջնոյն Քէսապ ղրկուիլ սկսաւ։ Ձեր տարեկան բաժնեգինը ստացած ենք։ Նախորդ հաշւոյն համար ձեր անուամբ ո՛ և է վճարում եղած չէ մեզ։

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԲՆՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԳԱՑՈՅՑ

26 ՅՈՒՆԻՍ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ.—Բարոյագիտութիւն. Ֆրանսերէն և Պատմ. Ֆրանս. Մատենագրութեան* (Ա).— Օսմաներէն և Օսմ. Պատմութիւն և Աշխարհագրութիւն* Թուրքերէն լեզուով (Բ).— Բնական գիտութիւնք. Գերմաներէն* (Գ).—Աշխարհագրութիւն (Դ).— Պատմ. Երևելի Անձանց (Ե)։

ՄԱՆՉՈՒՄԷԻ
ՄԻՋԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆԸ

ՄԱՀ

Տիկ. Աղաւնի Ց. Մէրկէրեան երկարատև հիւանդութենէ մը վերջ Եշ. երեկոյ մեռաւ Գում-Գափուի բնակարանին մէջ։ Ցուղարկաւորութիւնը Ուր. օր կատարուեցաւ Մայր-եկեղեցւոյ մէջ։

ԲԱՐԻԶԻ ՊՕՐՍԱՆ
BOURSE DE PARIS

7 Յուլիս 1906

Ֆրանսական 3%	96.92
Օսմանեան Միացեալ	96.35
Երկաթուղի	145.75
Պանք Օթթօման	650.—
Րէժի	442.—
Թրամվայ	47.—

ՌԷՍՄԻ

ԹԵՎՃԻՀԱԹ

Թարապլուսը Կարպ վիլայէթի էչրաֆընտան վէ մէճլիսը իտարէ ազասընտան իպզէթլու Հաճի Մուսթաֆա էֆէնտիյէ րիւթպէի Սանիյէ սընըֆը սանիսի թէվճիհ պույրուլմուշ տըր։

ՆԸՇԱՆ

Թարապլուսը Կարպ էշրաֆ վէ թիւճճարը մահալլիյէսինտէն Շէրիֆ Պանայէ էֆէնտիյէ իւչիւնճի վէ Նաֆաա սէր միւհէնտիսի Ճաւաս էֆէնտիյէ տէօրտիւնճի րիւթպէլէրտէն Օսմանի նըշանը վէրիլմիշտիր իհսան պույրուլմուշ տըր։

ՆԵՐՔԻՆ

ՊԱՇՏՕՆ.— Զիլէի (Սիվաս) Նայիպ կարգուեցաւ Օրթաքէօյի նախորդ նայիպ Սալիմ Սապրի էֆէնտի։

⁂ Ռուսումաթի էվգաֆի տեսուչ Շահապէտտին էֆ. Քըրք-Քիլիսէ փոխադրուած ըլլալով, իրեն յաջորդեց Արզնիի էվգաֆի տեսուչ Պէքիր Սըտքը էֆէնտի։

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ.— 4րդ Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ երկրաչափական վարժարանին լեզուներու ուսուցիչ Բարտօ էֆ.ի։

⁂ Ռումէն կառավարութիւնը Ռումանական Թագ պատուանշանին Բ. կարգը և կրթական Ոսկի նշանը նուիրած էր Մաքսատուններու, Թղթատարական և կրթական նախարարութեան գրաքննութեան Տնօրէն Լօպէլ էֆ.ի։ Սերպիական կառավարութիւնը Ս. Սավա պատուանշանին Բ. կարգը նուիրած էր Խարիճիյէի Թարգման Սաաէտտին Պէյի։ Կայս. Իրատէ մը արտօնեց այս պատուանշաններուն գործածութիւնը։

ՊՈԼՍՈՅ ԿԱԼՈՒԱԾԱՏՈՒՐՔԵՐԸ.— Պոլսոյ կալուածատուրքերու մասին, արդէլքի հակառակ կարգ մը հաշուակցութիւններու տեղի չտալու և այս գործը աւելի կանոնաւորելու ու ապահովելու համար պատրաստուած հասոյթներու և ծախքերու վերաբերեալ պաշտօնաթուղթերը նախ պիտի յանձնուին Եւմտական գանձուն գանձումներու հետազոտման յանձնաժողովին։ Այս յանձնաժողովը քննութիւն պիտի կատարէ և տուած որոշման համաձայն պէտք եղածը պիտի գործադրուի։

ՕՐԻՆԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ջինորսութեան կանոնագրին 27րդ յօդուածին իբր յաւելուած հետեւեալ տրամադրութիւնը աւելցուեցաւ, որ վաւերացած է կայս. Իրատէով.— Ջինորսութեան ատեն, հակառակ արգելքի, անոնք որ Թորփիլ կը գործածեն, ներկայ 27րդ յօդուածին համապատասխանող՝ Պատժական օրէնքին 196րդ յօդուածին համաձայն պատժոյ պիտի ենթարկուին։

⁂ Երկաթուղիներու ոստիկանութեան կանոնագրին 4րդ յօդուածին իբր յաւելուած հետեւեալ տրամադրութիւնը աւելցուեցաւ, որ վաւերացած է կայս. Իրատէով.— Առանց ստիպողականութեան, երբ ուղեւոր մը վակոններու մէջ գտնուած օգնութիւն խնդրելու նշանները գործածէ, և առանց արկածի տեղի տալու կառախումբը կեցնել տալու պատճառ ըլլայ, այդ ուղևորը պիտի վճարէ կէս օսմ. ոսկիէն մինչև 5 ոսկի տուգանք։ Այս տուգանքին չափը ներկայ կանոնագրին տրամադրութեանց համաձայն, կ'որոշուի Դատարանին կողմէ։

ՄԻՍԻ ԽՆԴԻՐԸ.— Քաղաքապետութեան Խորհուրդը շարունակելով միսի խնդրին վրայ իր խորհրդակցութիւնները, նկատի առաւ որ Պոլիս հասած ոչխարներուն յղի ըլլալը կամ ոչ նկատի չառնուիր մսավաճառներէն որոնք զանոնք մորթելով կը ծախեն ժողովուրդին։ Այս պատճառաւ, որոշուեցաւ Նահանգները որ էգ ոչխարները չի ղրկուին Պոլիս, բաց ի այն պարագայէն երբ անոնց ակռաները թափած են։ Անասնաբոյժները պէտք է ուշադրութեամբ քննեն որ յառաջ էգերը ճամբայ չհանուին։ Այս հրահանգ տրուեցաւ պէտք եղած տեղերը։

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ վարժարանին ուսանողներուն համար գործողութեանց աշխատանոց մը պիտի շինուի կառավարական հաստատութեան քով։

ՀՈԼԱՆՏԱԿԱՆ դեսպան սը Պիլտոն շաբաթ առաջ արձակուրդով մեկնեցաւ Հոլանտա։ Ուղերթի գացած էին դեսպանատան խորհրդականը, Ա. Թարգման Կարապետեան էֆ. ևայլն։

ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՒ ԽՌՈՎԱՐԱՐ.— Պոլսոյ եղեռնագատ ատեանը կը ծանուցանէ թէ Սէրէզլի Սալաէտտին փաշա զադէ Թայյար որ Աթէնք փախած էր, ձերբակալուած չըլլալով 10 օր պայմանաժամ կը տրուի յիշեալին որպէս զի ներկայանայ Ատեանին։ Հակառակ պարագային, երբ օրէնքի անսաստող, քաղաքային իրաւունքներէ պիտի զրկուի, և բացակայութեան պիտի դատուի և տուգանքները պիտի գրաւուին։

⁂ Եղեռնագատ ատեանը ձերբակալման հրամանագիր մը հրատարակեց Ալի Հաֆինի դէմ, որ Եգիպտոս փախչելով, վնասակար հրատարակութիւններ ընելու յանցգանն էր։

ՄԷՔԹԷՊԻ բարձրագոյն վարժարանէն այս տարի շրջանաւարտ կ'ելլեն 40 ուսանող, ամէնքն ալ Թուրք։

ՄԱԽՍՈՒՍԷԻ ՆՈՐ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ.— Մախսուսէի հաշւոյն երկու շոգենաւեր գնուած էին Անգլիայէ, որոնք ճամբայ ելած էին դէպ ի Պոլիս ինչպէս գրած էինք։ Այս շոգենաւերը պիտի կոչուին Թիյր Միւժկեան և Պիգիմ Ալէմ։

ՊԷՅՐՈՒԹԻ ամերիկեան բժշկական համալսարանին տարեկան քննութեանց ներկայ գտնուող օսմ. քննիչ մարմինը Պոլիս դարձաւ։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ.— Երկրագործական պանքային վիճակահանութեան մէջ շահող թիւերը քիչ ըլլալով, որոշուեցաւ երրորդ վիճակահանութենէն սկսեալ շահող թիւերուն քանակը աւելցնել և վաճառողներուն տրուած 100ին 5 շահն ալ 6ի բարձրացնել։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ.— Արեւելեան երկաթուղիին շահագործման ընկերութեան 15,000 արժեթուղթերը այդ ընկերութեան գործերը կատարող Պանքային կողմէ, Գերմանիոյ և Զուիցերիոյ մէջ շրջաբերութեան դրուեցան։ Տէօյչէ Պանք և Վինըր Պանք Ֆէրայն մօտերս Պերլինի և Վիեննայի Սակարաններուն մէջ պիտի մտցնեն Արեւելեան երկաթուղիներու բաժնեթուղթերը 100ին 120 գինով։

ՊՈՒԼԿԱՐ ԽՌՈՎԱՐԱՐՆԵՐԸ.— Աւազակային քամիթէին պատկանող յեղափոխականներէն փախստական Բրէզովացի Պօղոսն Տուաէ և Թրայքօ Սթէֆանօ ձերբակալուեցան և յանձնուեցան դատարանի։ Քարտան Քարամանլի վարչութեան տակ գտնուող 9 հոգինոց աւազակախումբ մըն ալ ընդհարում մը ունեցաւ զօրքերու հետ։ Բոլոր աւազակները և իրենց պետը սպաննուեցան։

ԹՈՒՐՔԵՒՊՈՒԼԿԱՐ առևտր. դաշնագրին կնքման խառն յանձնաժողովին առջի օրուան նիստին ներկայ գտնուեցաւ նաև Առևտր. և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան պաշտօնէութենէն Նաֆիլեան էֆ.։

ԹՈՒՐՔԵՒԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— Մ. Նահանգաց կառավարութեան կողմէ պատրաստուած վիճակագրութենէ մը կ'երևայ թէ մինչև 1905 ապրիլ 30, տասը ամսուան մէջ եւրոպական Թուրքիայէն Ամերիկա ղրկուած ապրանքներուն քանակութիւնն է 3,419,150 տոլար. մինչև 1906 ապրիլ 30 ալ 5,522,299։ Ամերիկայէն եւրոպ. Թուրքիա ներածուած ապրանքներու քանակութիւնն է 1904ին 421,402, 1905ին՝ 437,738 և 1906ին մինչև ապրիլի վերջը՝ 771,252։ Ասիական Թուրքիայէն Ամերիկա տարուած են մինչև 1904 ապրիլի վերջը՝ 4,389,907 և 1905ին՝ 4,963,439, 1906ին՝ 5,652,838։ Ամերիկայէն ասիական Թուրքիա ներածուած են՝ 1904ին՝ 342,588, 1905ին՝ 329,660 և 1906ին մինչև ապրիլի վերջը՝ 588,243 տոլար։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԽԱՐԴԱԽ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ.— Ցրդ Թաղապետութեան քարտուղարներէն Ֆէթհի և Բէհճաթ էֆ.ները նոյն պաշտօնատանը աշխատող Շիշէճի Հասիպի անուան երեք կեղծ կտրօն շինած էին 1319 տարուան յատուկ և օրական կնիքով կնքելէ և ստորագրելէ ետք, Սկիւտար, Ջինճիրլի Քույու, լումայափոխի մը ծախած էին։ Այս կտրօնները առնուեցան և կը քննուին։

ՄՆԱՆԿ.—Սաևստր. Բ. դատարանը անանկ հռչակեց Ղալաթիա, Քուրշունլու խան, ներկավաճառ Ռօպէրթ Քոհէնը և Բերա, Շիշլի ճամբայ, 164 թիւ վաճառատունը հաստատուած Թօհաֆիճեան Եղիա Շահպազեանը։ Այս վերջինին մեւժ քօմիսէր կարգուեցաւ դատարանին անդամ Եանգօ էֆէնտի, իսկ փաստաբան Խալիլ Րիֆաթ և Տիրան Երկանեան էֆ.ները ալ ատաժամեայ սէնտիք։

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ.— Պատժական Ա. Ատեանը առջի օր դատեց Անդրանիկ կամ ուրիշ անունով Արթաքին և իր ընկերը Մէհմէտ Րէֆիքը որոնք կամուրջին՝ Պատրիարքի Նաւամատոյցին վրայ Հասան էֆ. անուն ուսանողի մը ժամացոյցը գողցած էին։ Անդրանիկ դատապարտուած դասակարգէն ըլլալով դատապարտուեցաւ տարի մը բանտարկութեան, իսկ Րէֆիք ալ 6 ամսուան։

ՀՐԴԵՀ.— Շաբաթ առտուան դէմ հրդեհ ծագեցաւ Գատըգիւղ, Սագըզ Աղաճ, Պահարիէ փողոց, ալիւրի վաճառական Յակոբ էֆէնտիի կէս-քարուկիր տունէն։ Այրեցան նոյն տունը, լուսանկարիչ Խնտամեան էֆ.ի սեփական և գորգավաճառ Միրզա Մսերեան էֆ.ի բնակած տունը և Տիկին Աճէմեանի տունը։ Սէլիմիէի զօրանոցին Ջրանկիր խումբը և Թաղապետութեան փութկոտ միջոցները առաջքը չառնուած առնէն հրդեհին։ Հրդեհին վայրը փութացած էին Սկիւտարի շրջանակին զինուորական հրամանատար Ահմէտ Խուլուսի փաշա, 10րդ Թաղապետութեան տնօրէն Հաճի Հիւսէյին պէյ եւն. Վեհ. Սուլթանին կողմէ երկու Թիկնապահներ հրդեհին վայրը փութալով, հրամաններ տուին շուտով մարելու։ Հրդեհը սկսած տունը կարասիներով միասին ապահովագրուած էր 600 ոսկիի։ Խնտամեանի տունը 300 ոսկի, իսկ վարձակալ Մսերեանի կահկարասին 300 ոսկի, իսկ տիկին Աճէմեանի տունն ու կարասիները 280 ոսկի։ Ապահովագրական ընկերութեանց վնասը 1600 ոսկի է։ Քննութիւններէն հաստատուեցաւ որ հրդեհը սկսած տան տէրը Հաճի Յակոբ էֆ. նոյն գիշեր մինչև ժամը 5 Ճէվլիյէք Երուանդի սրճարանն է եղեր, իսկ կինը օդափոխութեամբ Սկիւտար կը գտնուէր։ Հաճի Յակոբ էֆ. տուն դառնալուն կ'երթայ կը պառկի պարտէզին վրայի սենեակը, և քիչ ետք աղմուկ մը լսելով կ'արթննայ, և բոցերը կը տեսնէ, կը շփոթի և Թարացան ելլելով կը սկսի պօռալ. Դրացիները կը փութան և կ'ազատեն։ Կը կարծուի թէ կատուները տապալած են վառող կանթեղ մը և հնկէց սկսած են բոցերը։

ՑՈՒՍԱՀԱՏ.— Ուլուպէլի գիւղախումբին (Օրտու) Ուզուն անուն Հայ գիւղին մէկ քարայրին մէջ կնոջ մը դիակը գտնուեցաւ։ Քննութեամբ հաստատուեցաւ որ Պասապեան Առաքելի կինը Նէմզուրն է, որ կրած սուգին չկրնալով տոկալ անձնասպան եղած էր։

ԱՆԽԻՂՃ ՎԱՇԽԱՌՈՒ ՄԸ ԵՒ ԻՐ ՊԱՏԻԺԸ.— Սիմհաճի գիւղէն կը գրեն թէ գիւղաքաղաքէս կէս ժամ հեռու կիւմիւշի բնակիչներէն ագահ մարդ մը մէկ ոսկիին համար ամսական 5 ղրուշ տոկոս և մէկ նկանակ ալ հաց կ'առնէր։ Սակայն տեղական կառավարութիւնը իմանալով, պատժած է այս անխիղճ վաշխառուն, օրէնքին տրամադրութեան համաձայն։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.— Բերայ, Թէլէկրաֆ փողոցի 11 թիւ Աբարթըմանի դռնապան Դիարպաքրցի Բեթրօ՝ նախորդ առտու ժամը 2ին, նոյն աբարթըմանին պատուհանէն ինքզինքը վար նետելով ծանրապէս վիրաւորուեցաւ ու քիչ յետոյ մեռաւ։

ԱՐԿԱԾ.— Ֆընտըգլը, Գապաթաշի նաւամատոյցը սրճևի Բեթրոյի 2 տարեկան աղջիկը Էլէնի, նախընթաց օր տանը երկրորդ յարկի պատուհանէն վար իյնալով ծանրապէս վիրաւորուեցաւ։ Հէք պզտիկը չկրնալով դիմանալ առած վէրքերուն՝ երէկ առտու մեռաւ։

ՀՐԴԵՀԻ սկզբնաւորութիւն մը տեղի ունեցաւ Ղալաթիա, Մումհանէի պողոտային վրայ Բանայոթի վարձած օթէլին վարի յարկէն, բայց հասած անմիջական օգնութեանց շնորհիւ առաջքը առնուեցաւ, և միմիայն սենեակին դուռը ու վարագոյրները այրեցան։ Արկածը առաջ եկած է սենեակին մէջ վառած գոլիզմայէն։

ՑԻՒՑՄԷՃԵԱՆ ԴԵՂԱՐԱՆԻՆ ազդը կարդալ չորրորդ էջը

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏԻ
մեծ վաճառատուն

Գրիգոր էֆ. Էրմէնեան, որուն Եւրոպա մեկնումը ծանուցած էինք անկէց առաջ, Աւստրիա, Գերմանիա, Պելժիա, Ֆրանսա և Անգլիա այցելած ըլլալով, այն անեղերու գործարաններէն մեծաքանակ նորաձեւ և ազնուն կերպասներ և ճաշակաւոր պատրաստ հագուստներ գնած է։ Իր բազմաթիւ յաճախորդները խիստ գոհ պիտի մնան Էրմէնեան էֆ.ի գնած կերպասներէն և պատրաստ հագուստներէն,

Որոնք կը ծախուին խիստ դիւրամատչելի գիներով։ 5—1

ՍԱԿԱՐԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆԸ

ՕՍՄ. ՄԻԱՑԵԱԼ ՔՈՆՍՈԼԻՏԷ

Երէկ առաւօտ բացուեցաւ	Օ.Ո.	104.11½
Երէկ իրիկուն գոցուեցաւ	»	104.09
Երէկուան էն բարձր գինը	»	104.12½
» էն վար գինը	»	104.04

ՌՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երէկ առաւօտ բացուեցաւ	ֆր.	145.25
Երէկ իրիկուն գոցուեցաւ	»	145.—
Երէկուան էն բարձր գինը	»	145.50
» էն վար գինը	»	144.87½

Շիրքէթը Խայրիէ	Օ. Ո.	37.—
Միթէլիի Պանքա		6.37
Սելանիկի «	ֆր.	173.—
Քոմերսիալ	Ա. Ո.	10.—
Քարասու Բրէվիլէժիէ	ֆր.	168.50
» Օրտինէր	»	155.—
Իզմիրի քարափ	»	595.—
Օսմ. Ապահով. Ընկ.	Օ. Ո.	4.37
Թրամվայի բաժնեթուղթ	»	8.80
» պարտաթուղթ	ֆր.	486.—
Տէրքոսի ջուրի ընկ.	»	290.—
Անատոլ. Երկ. բաժնեթ.	Ա. Ո.	18.35
Քարափ Կ. Պոլսոյ	ֆր.	459.
Քրէտի Ֆօնսիէ Էժիբս. 1886		320.50
» » » 1903		266.50
Թրամվայ		49.

ՅՈՒՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐ

Յունական փոխառութիւն	ֆր.	266.—
Պանք Նաս. Կրէս.	»	433.—
» « » Նոր	Օ.Ո.	4.08
Լաւրէոմ	ֆր.	64.—

ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Օսմ. ոսկին 100 ղչ.էն	ղչ. ֆր.
Ֆրանսական ոսկի	87.01
Անգլիական ոսկի	109 28
Բօլ	90.20
Մէճիտիյէ արծաթ	107.25
Ռուսլի Թղթադրամ	8.68
Քրիմից	50.—

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոնի վրայ չէք	ղրշ.	109.20
Բարիզի » »	ֆր.	22.97½
Վիէննայի » »	քուրօն	21.97
Պերլինի » »	մարք	18.71

ԲԱՐԻԶԻ ՍԱԿԱՐԱՆ

6 Յուլիս 1906

Ֆրանսական Ռանթ 3%		96.85
Օսմ. միաց. գոնս. 4% բաց.		96.40
» » » գոց.		96 42
Ռումէլիի երկաթուղի	ֆր.	146.—
Րէժիի պարտաթուղթ	»	441.—
Օսմանեան մաքս	»	496.—
Օսմանեան Պանքա	»	654.—
Քրէտի Լիօնէ	»	1147.—
Բարիզի Պանքա	»	1528.—
Աւստրիական Ռանթ	4%	99.55
Իտալական »	5%	102.10
Ռուսական »	4% 1901	76.50
Սպանիոլ. արտ. փոխ.	4%	95.72
Պալիա Քարա Այտըն	ֆր.	609.—

ԼՈՆՏՈՆԻ ՍԱԿԱՐԱՆ

6 Յուլիս 1906

Անգլիական Ռանթ	87 56
Օսմ. Միաց. Գոնս. բաց. Գ.Կ.	95.37
» » » գոց. »	95.12
Օսմ. Պանքա	16.—
Պուլկարական 1892	103.—
Ռուսական 4% 1898—89	76 75
Յունական Ռանթ	41.—
Զարթըրըթ	1 25
Թրանսվալ	1.87
Ռանտմայն	5 68
Ճաբոնական 4%	90 63

ՊԵՐԼԻՆԻ ՍԱԿԱՐԱՆ

6 Յուլիս 1906

Գերմանական 3%	88 20
Օսմ. Միաց Գոնս.	95.80
Օսմ. փոխառութիւն 1903	88.25
Ռումէլիի երկաթուղի	146.90
Ռուսական 4% 1902	75.60
Անատոլ. Երկ. Պարտ. Ա.	103.30
« » » Բ.	103.80
» » Բաժնեթ. 60%	134.20

ՎԻԷՆՆԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

6 Յուլիս 1906

Օսմ. Րէժի	312.—
Ռումէլիի Երկաթուղի	163.—
Վիէննական պանք	549.50

ՊՐԻՒՔՍԷԼԻ ՍԱԿԱՐԱՆ

6 Յուլիս 1906

Օսմ. Միացեալ Գոնս.	96.18
Ռումէլիի Երկաթուղի	147 25

[illegible] — 72

ԳՐԵՑ ԺԻՒԼ ՎԵՐՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ [illegible]

Արտասովոր Կտակ Մը

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Դ

ՉՈՐՐՈՐԴ ԽԱՂԱԿԻՑԸ

Ուստի 48 ժամուան մէջ հրաւէր հրաւէրի վրայ տեղաց, զորս չկրցաւ մերժել ռիքորդըրը։ Ամէն պատերու վրայ կ'երեւէր Հարրիս Բիմպէլի անունը, որ իրիկունը ելեկտրական լոյսերու մէջ կը շողար։

Այնքան սիրալիր ընդունելութիւն գտած մէկը ի հարկէ երախտապարտ կը մնար քաղաքին հանդէպ։ Ուստի իր մտադրութիւնը, եթէ խաղը շահէր, ինչպէս յայտարարեց ինք, Չարլըստընի մէջ հիմնել էր ապաստանարան մը ընտանեզուրկ աղքատիկ անձերու համար։ Եւ ինչ որ նշանակելի է, շատ մը օրօրմըլլիններ եկան արձանագրել տուին իրենց անունը, տեղ բռնելու համար այդ հիմնելի մարդասիրական հաստատութեան մէջ։ Ինչպէս կը տեսնուի, Հիքէրպոնի ալպայ ժառանգորդը աւելի վեհանձն ու առատաձեռն ցոյց կուտար ինքզինքը հարաւային Քարոլինայի Չարլըստըն քաղաքին մէջ, քան թէ Քօլօրատոյի Տէնվէր քաղաքին մէջ։

Վերջապէս այս հանդիսութեանց մէջ տեղ հասաւ Յունիս 3ի իրիկունը։ Հիանալի սեղան մը սարքուած էր ի պատիւ Հարրիս Բիմպէլի, որ տեղի պիտի ունենար հովանաւոր ծառերու տակ, քաղաքէն դուրս։ Հրաւիրեալներու բազմութիւնը հոն գնաց թափօրով։ Հարկ չկայ ըսելու թէ ի՛նչ խանդավառութեամբ տեղի ունեցաւ այս հացկերոյթը, որուն վրայ ամփոփելի է գաղափար մը տալ։ Կը բաւէ միայն գիտնալ թէ հսկայ կարկանդակ մը շինուած էին որ 8000 լիպրա կը կշռէր, ամենախոշոր փուռի մը մէջ եփած էր և 12 ձիերով լծուած կառք մը բերած էր հացկերոյթին վայրը։ Այս կարկանդակը պատրաստելու համար գործածուեցան 2400 լիպրա կովու, 400 լիպրա ոչխարի, 560 լիպրա խոզի միս, 120 լիպրա կարագ, 76 հազար, 188 վառեակ, 200 աղաւնի, 2800 լիպրա ալիւր, 240 երէի միս։ Այս մեծադամբանը ուտելիքը 14 տաք լայնութիւն, 24 երկայնութիւն և 6 տաք բարձրութիւն ունէր։ 5 տաք երկայնութեամբ դանակներով էր որ 20 սեղանապետներ կտրատեցին այս հսկայ ուտելիքը, քանի մը հազար հրաւիրեալներու համար, որոնք սակայն զատ ուրիշ շատ ուտելիքներ իրենց տրամադրութեան տակ ունէին։ Եւ այն ատեն թնդացին որոտաղոչ ծափերը, որոնց արձագանգը մինչեւ ծովուն բացերը տարուեցաւ հովէ։

—Կեցցէ Հարրիս Բիմպէլ, կեցցէ չորրորդ խաղակիցը։

ԲԷՆԴԸՐՔԻ ՄԷՋ

Մայիս 26ին Շիքակոյի հրապարակին ամէն հանդիսականներ, որոնց կը հետեւէին նաեւ միւս քաղաքները, Լիսի Ուէկի վրայ դրուած գրաւները բարձրացան մինչեւ 7ի դէմ երեքի։ Եթէ ակնկալները տեղի ունեցած չէր այս բարձրացումը, պատճառը այն վախն էր թէ այս աղջիկը պիտի չկրնար համբերել յաջորդական տեղափոխութեանց յոգնութիւններուն, և ասկէց զատ իր հիւանդութիւնն ալ նուազեցուց այն փոքր վստահութիւնը՝ զոր կը ներշնչէր։

Արդ, հինգերորդ խաղակցին առաջնակն վիճակը այժմ խիստ գոհացուցիչ էր։ Ասկէց զատ, քուէաթերթուն երկրորդ արդիւնքը շատ բարեբեր եղած էր, քանի որ Լիսի Ուէկ Բէնդըրքի պիտի երթար։ Մէկ կողմէ այս ճամբորդութիւնը միայն քանի մը հարիւր մղոնի կը կրուէր, և միւս կողմէ Բէնդըրքի 38րդ խորշը կը գրաւէր քարտէսին վրայ։ Կը հետեւէր ասկէց որ Լիսի Ուէկ, երկու տառուող, 63 խորշերուն կէսէն աւելին անցած էր։

Ինչպէս յայտնի, Լիսի Ուէկ և ընկերուհին Մայիս 23ին մեկնեցան Միլուօքիէ, որպէսզի Ք. Գ. Հ. սկզբնատառերով խաղակցին չհանդիպին, որովհետեւ այն ատեն պիտի պարտաւորէին նախ պարզ թիւը մը վճարել և յետոյ իրենց տեղը տալ եօթներորդ խաղակցին, և անկէ վերջը միայն վերսկսիլ խաղը։

Երկու բարեկամուհիները ողջ առողջ ժամանեցին Իլլինոյսի գլխաւոր քաղաքը, և իրենց վերադարձը ծանուցանեցաւ լրագրաց մէջ և. քանի մը լրաբերներ ներկայացան Շէրմըն Սթրիթի տունը։ Այս այցելութեան հետեւանքը սա եղաւ որ նոյն իրիկունն իսկ Չիքակօ Հէրալտ հրատարակեց տեսակցութիւն մը, որմէ կը հասկցուէր որ երկու աղջիկները լաւ վիճակի մէջ էին։ Հինգ օր Շիքակօ մնացին և որովհետեւ աւելորդ էր օթէլի ծախք ընել, տան մը մէջ բնակեցան։ Ամսուն 27ին Օվիտա Ֆօլի հարցուց իր ընկերուհին։

— Ե՞րբ պիտի մեկնինք։

—Դեռ ժամանակ ունինք, պատասխանեց Լիսի Ուէկ։ Յունիս 6ին պիտի գայ Տիար Դօրնպրօքի հեռագիրը ի Բէնդըրքի և ոչ Մայիս 27ենք։ Ահա 10 օր ունինք և գիտեն որ 24 ժամէն կարելի է Բէնդըրքի երթալ։

— Անշուշտ, Լիսի, բայց միայն Բէնդըրքի չէ որ պիտի երթանք։ Ուր ալ անոր գլխաւոր քաղաքը, Ֆրանքֆորդ, այլ Մամմօթ Քէյվը, Մ. Նահանգներու և նոյն իսկ աշխարհի հինգ մասերու հռչակաւորներէն մէկը։ Մր. Հիբէրպոն ի՞նչ լաւ գաղափար մը ունեցաւ մեզ հոն ղրկելու։

— Ինքը չէ, Օվիտա, այլ քուէաթերթու 12 թիւերն են որ հոն կը ղրկեն մեզ։

— Տեսնե՛նք, տեսնե՛նք, ինք չէ՞ր որ Բէնդըրքիի նահանգին մէջ Մամմօթ Քէյվը ընտրած էր։ Ուստի ամբողջ կեանքիս մէջ երախտապարտ պիտի ըլլայի անոր եթէ Օքսվուտի գերեզմանատան մէջ հանգչած չըլլար։ Իրաւ է որ երբ անիկա ուրիշ աշխարհի մէջ չըլլար, մենք անոր ժառանգութիւնը հետապնդելու առիթ պիտի չունենայինք։ Վերջապէս ե՞րբ պիտի մեկնինք։

(Շարունակելի)



ՊՕՎԻՆԻՆ

ՊՕՎԻՆԻՆը որ քսանըեօթը տարիէ ի վեր մեծ օգտութով կը գործածուի Ամերիկայի, Եւրոպայի եւ Ճաբոնի բժիշկներուն կողմէ, հազարաւոր բժշկաց վկայութեամբ հաստատուած է թէ կը գերազանցէ բոլոր պատրաստ դեղերը, իր թէ բուժիչ եւ թէ սնուցիչ յատկութեամբ։

ՊՕՎԻՆԻՆը պատրաստուած է եզան մսին եւ մանաւանդ եզան ուղեղին եւ ոսկորներուն զօրացուցիչ եւ սնուցիչ հիւթերէն։ Այս պատճառով ՊՕՎԻՆԻՆի մէջ գտնուած օգտակար նիւթերէն մէկն ալ ֆօսֆօրն է իր բնական վիճակին մէջ, որ՝ ինչպէս յայտնի է՝ մեծ եւ ազդու դեր մը ունի ոսկորի հիւանդութեանց բուժման եւ մանուկներու զօրացման եւ կազդուրման համար։ Աւելորդ է ըսել թէ բնական եւ դիւրամարս վիճակի մէջ ֆօսֆօրի գործածութիւնն որ աստիճան նախընտրելի է, քան անբնական գործածութիւնը այդ դեղին։ Ահա այս պատճառով, փոխանակ ԿԱԹՆԱԽԱՌՆ ԱԼԻՒՐՆերու, ՊՕՎԻՆԻՆի գործածութիւնը կը յանձնարարուի մանուկներու հիւանդութեանց մասնագէտ բժիշկներու կողմէ։

ՊՕՎԻՆԻՆը բնաւ վնաս չի պատճառեր ոեւէ հիւանդի, ինչ որ ալ ըլլայ անոր դարմանման եղանակը։ Ուստի իր սնուցիչ յատկութեամբը, արագ ազդեցութեամբը եւ ամէնէն փափուկ ստամոքսներու կողմէ դիւրաւ մարսուելու յատկութիւններովը կը գերազանցէ բոլոր պատրաստ դեղերը, եւ մեծապէս կը նպաստէ մանուկներու, նոր ապաքինողներու, եւ վերջապէս ամէնէն փափուկ վիճակի մէջ գտնուողներու, ինչպէս նաեւ կաթ տուող մայրերու։

Ներկայ ծանուցման շուրջն ակնարկ մը նետել բաւական է, հասկնալու համար թէ ՊՕՎԻՆԻՆը ինչ կարգի հիւանդութեանց համար բուժիչ յատկութիւն ունի։

Նկատի առնելով նոյն դեղին ունեցած հրաշալի օգտակարութիւնը, ՊՕՎԻՆԻՆը բերուած է Թուրքիա եւս։ Վաճառման կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Ենի Ճամիի մօտ, Օսմ. Նամակատան ետեւի փողոցը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՑ դեղավաճառատունը, որուն պէտք է դիմել Թուրքիոյ ամէն կողմերէն մեծաքանակ գնումներու համար։ Կը գտնուի նաեւ բոլոր մեծ դեղարաններու եւ դեղավաճառներու քով։

Բոլորովին սխալ է Եթէ մարդիկ իրենց փտած կամ կոտրած ակռաները քաշել կուտան.

ԹՈՄ. ԴԻՄՍՆ

ԱՏԱՄ ՆԱԲՈՅԺ

ԱՐԱՄ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ

որ արհեստական ակռաներ կը հաստատէ ոսկի կը լեցնէ եւ ոսկի գուռոն կ'անցընէ

Այցելութիւններ կ'ընդունի ամէն օր առտուն կանուխ, Սկիւտար, Ինասիյէ իր բնակարանը և ժամը 4—11 Պոլիս, Պաղչէ Գաբու, Պէն-Պիր-Չէշմէ վաճառատան դիմաց։ 3—50

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏԱՐ-ԻՒԼ-ԱՃԷԶԷ

Պոլսար զուլվերիյէ իչէր բեպիր չամաշըրխանէ բեպվիմ եկիւվի վէ բէ- [illegible]

Երգամա վէ իւթիւ, գօլալը վէ եա գօլասըզ

Ջամաշըր սօն մօտէլ երգայըրը մաքինալար [illegible]

Երգանմա վէ իւթիւ գօլասըզ	Ղ.րշ.	Բր.
Եաթագ չարշաֆը		20
Հէհէյիւ էնթարի		20
Չօրապ (չիֆթի)		10
Գարխօլա էթէկլիկի (1)	1.	
Սուֆրա էօրթիւսի	1.	
Եաթագ »	1.	
Ծիւալի իչ ֆիմթանը	1.	

(1) գօլա խըթէնիլիւրսէ 60 բարա դամմ խալիր. գասըն չամաշըրը իչինէ հաֆիֆ գօլա 20 բարա

Երգամա վէ իւթիւ գօլալը	Ղ.րշ.	Բր.
Եադգա		10
Գօլըդ (չիֆթի)		20
Կէօյիւսլիւք մա եագա		30
Ֆըրէնկ կէօմլէկի	1.	
Թիւլ բէրտէ (բարչա)	2.	
Պէյազ էլէկ	2.	
Երքէք վէ գատըն էլպիսէսի Թագըմ	10.	

Ջամաշըր գալի օլսուղը Թագարրուտ տէրհալ թէէօտիյէ խըլըր։

Մէքթուպիլ, օթէլ վէ լօղանթա վէ սաիր մահալլէր իչին միւսաիտէթլէ պաշգա մուղավէլէ եաբըլըր։

Շիքեայէթ վուգուընտէ Տարիւլաճէզէ միւտիրիյէթինէ միւրաճաաթ իտիլմէլի տիր։

Տարիւլաճէզէ չամաշըրխանէսի չիւպէլէրի, Պէյօղլունտա Սաքըզ Աղաճընտա 15 նօմ. տա, Իսկիւտարտա Արապա մէյտանընտա Շէյխ ճամիսի ճատտէսինտէ Բաբազ օղլու Տիգրանին [illegible] քեամըր։ 1—6

ՆՇԱՆ ԶԱՄԻՉԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄՈՄԵՐՈՒ ԵՒ ՊԵՐՃՈՒԹԵԱՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ

Կ'ուզէ՞ք հարսնեքնիդ փայլէ աւելցնել, գեղեցիկ «եֆէ» մը տալ մոմերուն, դիմեցէք ՆՇԱՆ ԶԱՄԻՉԵԱՆԻ վաճառատունը, ուր բացի պատրաստ գտնուած մոմերէ կը յարդարուին նաեւ մեծ խնամով վերջին նորաձեւութեամբ հաշտակաւոր մոմեր, ամէնէն աժան գիներով։ Կը գտնուի նաեւ հոն հարսի կէրոնաց, քօղ, ծաղիկ ծառուկ, զարդարուած կողով, ծաղիկ, փետուր, եւն. եւն. եւն.։

Փութացէ՛ք, հարսնիքի Տէրեր, այցելել անգամ մը Նշան Զամիչեանի հարսնեկան մոմերու նոր վաճառատունը, ուր ոչ միայն ձեր հաճոյքը, այլ նաեւ ձեր քսակն ալ գոհացուած պիտի գտնէ։

ՄԻԱԿ ՏԵՂ ՊԵՐԹԱՔ

ՆՇԱՆ ԶԱՄԻՉԵԱՆ

Կ. Պոլիս, Քամաերօ խանի տակ, թիւ 86 20—9

ՆՈՐԱՀՆԱՐ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶՈՐ ԲԻԼ

Տանտերց, գրասենեակներու և ամէն կարգի հանրային հաստատութեանց ինչպէս նաեւ մասնաւոր և հանրային շահերու մէջ գործածուելու նպատակով Ֆրանսայի մէջ պատրաստուած այս Զոր Բիլը (զանգակ sonnerie) իր օգտակարութեան և անդադրութեան տեսակէտով կը գերազանցէ մինչեւ հիմա ելած բոլոր իր նմաններէ։ Ուստի կը յանձնարարուի պէտք ունեցողներուն վերոյիշեալ ֆրանսական նոր զիւտ զոր Բիլէն առնել։



Այս Նորահնար «Զոր Բիլ»ը՝ չունենալով իր մէջը ոչ զինգօ, ո՛չ թղ, ո՛չ հեղէ կամ ապակիէ չինուած գործիներ և ո՛չ ալ չոգեխանուրէ հեղուկներ, ո՛չ թաքէն և ո՛չ ալ պաղէն բնաւ չի ազդուիր եւ հետեւաբար իր միւս տեսակներուն պէս ալ չաւրուիր։

Վերոյիշեալ Զոր Բիլը որ հազիւ լուցկիի տուփի մը ծաւալը ունի, ձայնի տեսակէտով ալ կը գերազանցէ նոյն իսկ իրմէ շատ աւելի մեծ ծաւալ ունեցող միւս զանգակները։

«Նորահնար Զոր Բիլ»ին ամէնէն կարեւոր մէկ յատկութիւնն ալ սա է որ պահանջուած տեղը, առանց ոեւէ ծախքի մը կրնայ ուղղուած տեղը զետեղուիլ կամ փոխադրուիլ և մանաւանդ կրնայ դրուիլ երկայնքին, լայնքին, հորիզոնական և կամ ինչ ձեւով որ ուզուի։

Գինը Պոլսոյ համար 25 զաւառներու համար կանոնաւոր ամպալաժով եւ Թղթատարի ծախքով 35 զրուշ է։

Միակ կեդրոնատեղին է. — Եսկի Զապթիյէ Ճատտէսի, Ցովհաննէս Փափազեանի «Մաժուլաթը Օսմանիյէ» վաճառատունը. Թիւ 57—59. 10—10

Անկլօ-Ամերիկեան ատամնաց ընկերութիւն Նիւ-Եօրք, Ֆրանքֆորդ եւ Լոնտոն

Թուրքիոյ ընդհանուր գործակալք

ԼՈՒՔՍ ԵՒ ԲԼԱԹՆԷՐ

Պոլիս, Անանիասի խան Նօ. 31

Պատրաստ ունինք նոր հաւաքածոյ մը ատամանց, զոր փափաքող ատամնաբոյժք կրնան այցելութեամբ գնահատել, նամանաւանդ իրենց ուշադրութիւնը կը հրաւիրենք (Քրամփօն Պրէվըթէ Փ աբ՛րինի) ատամանց։ 3—3

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ճամբորդ և ապրանք փոխադրող շոգենաւեր

Ա. կարգի	Բ. կարգի
Սէտի	Նոյտօքրիս
Մինիօ	Էմէյսիս
Րամսիս	Պուզիրիս
Թէյպըր	Մօէրիս
Նորպօն	Ֆայէնի
Նավարին	Ֆարօս
	Թիպօ

Առաջին կարգի շոգենաւերը շատ հանգստաւէտ են. նաւուն մէջտեղը ընդարձակ սենեակներ ունին, ելեկտրականութեամբ կը լուսաւորուին և կրնան ճամբորդներու համար ամէն հարմարութիւն ունին։

Երկրորդ կարգի շոգենաւերն ալ առանձնափակ թեւով ճամբորդներ կ'առնեն, բայց սենեակներ չունին։ Աղբյն. Կ. Պոլսէ Լիվըրփուլ Ա. կարգի գինն է 15

» » Բ. » » » 11

Կը խնդրուի վաճառականներէն որ փոխադրութեանց և Ղալաթիոյ մաքսէն հանելու համար իրենց հրահանգները տան շոգենաւուն ժամանումէն 24 ժամ առաջ։

Ամերիկայի և Եւրոպայի նաւահանգիստները տանելու համար ապրանքներ կ'ընդունուին։

Դիմել առ Ճ. Վ. Ուիթօլ և Ընկ. Գործակալք

Ուիթօլ խան, Պահճէ գաբու, Պոլիս

ՃԷՅՄՍ ՄՈՍ ԸՆԿ.

25—50 31 Ճէյմս Սդրիդ, Լիվըրփուլ

ՏՈՔԹ. ՅԱԿՈԲ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

որ Բժշկական Վարժարանի այս տարուան քննութեանց վկայեալներուն մէջ առաջին հանդիսացողներէն եղած է և յաջողութեամբ վկայուած, ատենաւոր բժշկութեան և գեղագործութեան վկայական ստացած է, միանգամայն մնալով պատուուած է, այս անգամ իրեն դիմող հիւանդներու դիւրութիւն ըլլալու համար կը գտնուի Զօրաքերթի ցերեկէ վերջ Էթ Մէյտանի Թիւ 2 տունը, Եւկօյարծի ցնէկէ վերջ Նշան Թաշ Պասմնեան էֆ.ի դեղարանը, միւս օրեր Լանկա ծանօթ Ատոմեան դեղարանը, ուր իրեն դիմող հիւանդներ բժշկական նոր մէթոտով կը դարմանէ։ Նարա՞ օրէր աղքատաց ձրի։ 10—5

ՕՄԷԿԱ

5 սէնէ իչին թէմինիէտ օլունմուշ այարլը սաաթլար, գասըն վէ էրքէք իչին էնվաըլ չէշիտ։

Նէկիանէ սէրօղիթօսը Տէրսաասէթտէ

ՕՐՕՋՏԻ-ՊԱՔ

5—50

Օ ԹԱԼՕՆ ՏՕՌ

Բարօ էֆ. Աճնամեան, համատոգոած Ղալաթիա, Պոյլոաս փողոց, Թիւ 103, ծանօթ է իբր առաջնակարգ կօշիկի գործարանատէր և 1903ի Աթէնքի միջազգային ցուցահանդէսին մէջ պատուոյ վկայական առած է։ Կը ծանուցանէ հասարակութեան թէ ընտիր և առաջնակարգ նիւթերով և նաեւ ճաշակով պատրաստուած ամէն տեսակ կօշիկներ ունի այրերուն համար, 60 զրուշի գինով։ Կան նաեւ կիներու համար խիստ վայելուչ կօշիկներ և տղոց համար կօշիկներ և մանուկներ ալ։

ԴԵՂԱՐԱՆ ՏԻՒՅՄԻՃԵԱՆ

Դեղերու ԹԱՐՄՈՒԹԵԱՆ և ՆՈՐՈՒԹԵԱՆ կազմանէ հիւանդներ կրնան մեծ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ դիմել Ֆերիքէյ, Զալաղ փողոց, Թիւ 21։

Դեղարանս ունի նաեւ բժիշկներ, մանաւանդ Տօքթօր Տիմիթրիատիս և Աւատամերոյժ Զ. Պարտիզպանեան, որոնք ամէն օր ցերեկէ վերջ իրենց դիմող հիւանդները ձրիաբար կը դարմանեն Դեղարանիս մէջ։ 17

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԷՐԵԱՆ